ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

1871

ԳԵԿՏԵՄԲԵՐ

Ա. ՏԱՐԻ Թիւ 12

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՎԻՊԱԿԱՆ· ՍԵՒ ԼԵՌԻՆ ՄԱՄԻԼ
ՔՆՆԱԿԱՆ· Պ. Լ. ՏԷՐ ՅԱՐԵՏԵԱՆ
» ԴՈՐԾԻԼՈՒ ԱԶԱՑՈՒԹԻՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒ· ԽՐԱԽԱՍԻՒԹԻՒՆ
ԴՐԱԿԱՆ· ԵՂԻՐ ՊՈՒՏ ԸՆԴՈՒՆԵԼ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ· ԲԱ ՔԵՆԶ ՊԱՏՊԱՆԱՅ ԴԱՐԱՆ՝ ՅԱՆՈՒՍ
ՊԱՏՄԱԿԱՆ· ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՅԼ ԵՒ ԱՅԼԵՔ· ԸՀԱՆԵԼԻ ԴՅՈՒՐ ՄԸ
» ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԴԻՊ
ԽՄԲԱԳԻՐ
ԲԱՆՀԱՒԱՍԱԿԱՆ· ՔԵՐՄԵՑԻՐ ԵՒ ՊԱՆԹԱՑԱԿԱՆ

ՋՄԻՒՐՆԻ

ՏՊԱՏԵՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1871 ԹԻՒ 12

ՎԻՊԱԿԱՆ

—

ՍԵՒ ԼԵՌԻՆ ՄԱՐԴԸ

Բ

Արդէն օրը կ'տարաժամէր՝ երբ Ատոմ՝ ալիքը ձեռքը բռնած, ձև մ'որ յետին տխրութեան նշանն էր, դուրս ելաւ՝ քթին տակէն մրմնջելով,

— Աստուած ողորմած է, և Մծբնայ Հայրապետը բարեխօս։

Իսկ մայրս՝ որուն քով մնայի, անշարժ կ'նստէր սատրին մէկ անկիւնն և խորունկ կ'մտմտար։ Մերթ՝ անտարբեր և անժպիտ ինձի կը նայէր, մերթ՝ աչքը պատէն կախուած Հօրս կենդանագրին կ'տանէր և լռիկ մնջիկ արտասուք կ'թափէր։

Ես տերևի պէս կ'դողդողայի, կարծես թէ անբևոյթ թշնամի մը մօրս և իմ մէջ պատեշ մը քաշեր էր, այնպէս որ անոր մնանելու կը վախնայի։ Նուարդի մարմնոն ուր ուրեմն կ'սարսռէր. իր խոշոր սև աչքն սկսեր էին կարմրիլ, իր կայտառ սպիտակ դէմքը մնհատիպ գոյն մ'առնուլ։ Ո՞ր սատանան կ'նեղէր այս ընտիր հոգին, որ՝ թէև իմ մայրս, իմ արևս էր, ուստի և իմ գովեստս անպատեհ՝ Դավրէժի մէջ նմանը քիչ ունէր՝ թէ գեղեցկութեան և թէ ազնուութեան կողմէ։ Երբ՝ փոքր էի, սրտովս կ'ճանչէի զինքն, և թերևս սխալէի, վերջէն մանրով զատեցի և չեմ կարծեր որ կողմնապահ սեպուիմ։ Եթէ տարին մի քանի անգամ՝ եկեղեցի գնալուն՝ տարը մօրս շնորհալի հասակին, հրափայլ աչերուն, նաղուն գնացքին վրայ կ'զմայլէր, ես ամէն օր, ամէն ժամիր բարութեան գանձերը կ'վայելէի, իր առաքինութեան գասերը կ'առնուի, իր առանին անոգիւտ կենաց ակնատես վկայ էի։ Առաջ բնական կ'գտնէի, երբ աշխարհ տեսայ, մտովին հիմնալի դասայ՝ իր հեղ՝ այլ ամենքուն բնաւորութիւնն, իր անուշ, այլ հպարտ վարվունքն։ Օր տեսեր էր մայրս՝ բայց 'ի սուգ կ'ապրէր չորս պատի մէջ, գեղանի էր, բայց իր գեղն ամուսնոյն համար կ'պահէր, արդ ու զարդ ունէր, բայց սևեր կ'հագնէր, և անդամանդ կամ ծաղիկ մ'իր չքնաղ ճակտին վրայ չէր փայլեր. քսան չորս տարու էր միայն՝ և լոկ երկու տարի հօրս հետ կենակցեր էր, բայց արդէն աշխարհային բերկրանք իր առջև արժէք մը չունէին. ազգակիցներ ունէր, որ ստէպ զինքը հանդիսաներու կ'հրաւիրէին, բայց լինքը լաւ ևս կ'սեպէր՝ տանը պարտէզը մտն դալ, իմ ձայնս և թռչուններու դայլայլիկը լսել, քան փասքուս, ծնծղայ և փանդիռ, իսկ ձմեռն՝ ուռանին մօտ կ'նստէր՝ սուրբ Գիրք կամ Եղիշէ կ'կարդար և լնձի Վարդանանց շահատակութիւնը կ'մեկներ՝ հայրս Նոր Վարդան անուանելով։ Աղէսը՝ Հայոց համար մանաւանդ՝ կենաց մէկ պայմանը կ'համարէր մայրս, և հեռուէն հօրս բաղդակից լինելու կ'տենչար։ Մինչդեռ Զօրաս կրակի և սուրերու մէջ կ'գտնուի, կ'ըսէր մայրս, իմ պարտքս է հսկել և աղօթել։ Երբ յաղթական դառնայ իմ Նոր Վարդանս, այն ատեն պիտի խնդամ՝ բոլոր Հայոց աշխարհին հետ, կ'յարէր նա, և զԱստուած պիտի փառաւորեմ. իսկ եթէ պատերազմի դաշտին վրայ ընկնի, թէև չեմ ելևակայեր, որովհետև արիասիրտ է, անշուշտ Լուսաւորիչ մեր արդար դատը կ'պաշտպանէ, և Ներսէս Նպատ լեռին վրայ կ'աղօթէ. եթէ թշնամին Հայկազնեան դունդը խորտակէ, պիտի մնանիմ և ես, որդեակ, և ինչպէս Խոսրով՝ այս քաղաքս կանգնեց Սասանեանի պար-

թուլեան 'ի յիշատակ և անուանեց Դա 'ի վրէժ, ես ալ քեզ պիտի կանդնեմ բռնակալութեան դէմ և պիտի ըսեմ իմ յետին շնչովս, ա՜ վրէժ։

Ուստամ և գիտութիւն չունէր մայրս, իրաւ, սակայն իր ուղիղ միտքը, բարեպաշտ ողին, պարզուց զգացումը՝ բարձր իմացականութեան տեղ կ'բռնէին։

Ուստի նոյն միջոցին անձկանօք կ'գիտէի Նաւարդի շարժումներն և չէի կարող ըմբռնել թէ ինչպէս հինգ վեց տարի իր ամուսնոյն տարաբկայութեան և զանազան աղէտից համբերատար ողորմելոկացող կին մը՝ յետին վհատութեան մէջ գլորի։ Անտարակոյս տնլուր վիշտ մը, գառն կասկած մ'տաւեր էր Ատոմին իսօքերէն՝ որով իր սիրտը կ'տաւապէր։ Երբ առաջ Զօրայի կարօտը մօրս Ճակտին մուայլը բերէր, գիս իր մօտ կ'կոչէր և կսթոցին համբուրելով՝ կ'սփոփէր։ Արդ՝ իր քոմն էի, իր աչքին մէջ կ'նայէի, և սակայն իմ ներկայութիւնս չէր զգար, աշխարհ մութ կ'երևէր իրեն և անդադար կ'հառաչէր։

Մի ժամու չափ այս սրտմաշ վիճակին մէջ մնալէն ետև՝ մայրս սթափելով յանկարծ ոտք ելաւ, շիտակ պատուհանը վազեց և հորիզոնը դիտելով մրմնջեց.

— Բաղաբերդ, սոսկալի գաղանիք մը կ'երևի ինձ Բաղաբերդ. մթէ ինչ պիտի լինէր, Տէր Աստուած, իմ համբերութեանս տրիտուրն . . . ։ Եթէ Զօրայ ողջ է, գիս կ'մատնէ, եթէ սև հոգն է, Ատոմ կ'դաւէ . . . ։

— Մայր իմ, ըսի քիչ մը սիրտ առնելով, այդչափ տրտում բնաւ չէի տեսեր քեզ։ Արդեօք այլ ևս չես սիրեր գիս, կարծես թէ փուշ եմ աչքիդ։ Մուցնոր որ ամէն օր արևը մարը մտնելու մօտ՝ ձեռքէս կը բռնէիր և պարտէզը կ'ինկնէիր։ Տես մի անգամ, քանի պայծառ է երկին, ինչպէս նորել լուսինն անուշ կ'փայլի։ Դիմացի ձիւնապատ բլուրներն ինչ սիրուն տեսարան ունին, հեռուէն գոյնզգոյն կ'երևին և կարծես թէ պիլլօրէ շարժուն տաղաւարներ են. ինչ ըսեմ, բոլոր բնութիւնը զուարթուն է, մայր իմ, դու ինչու կ'լաս և իմ սիրտս կը յուշնես . . . ։

— Հոգ մ'էր այն անցաւ, որդեակ . . . ։ Քանի մ'օրէն հայրդ տեսնել կ'յուսամ. այս յոյսն ուրախութեամբ փղձկեց իմ սիրտս։ Արի, պարտէզը պտոյտ մ'ընենք և ապա դանք վաղուան ուղևորութեան պատրաստութիւնը տեսնենք։

Այսպէս մայրս կ'ջանար պահել իր մորմոքն, այլ 'ի զուր, վասն զի

եթէ սիրելու մտոք քանի մը խօսք ևս ըսէի, անշուշտ լայը նորէն պիտի սկսէր։ Ուստի եռանդագին ձեռքը բռնեցի և իրեն հետ պարտէզդացի։ Պարտէզը գրեթէ թափուր և անշուք էր։ Զմեռնամուտն արդէն շատ պտղատու ծառեր մերկ ու տերևաթափ էր դարձեր, ծաղիկները թոշներ էին, մեր ոտից ներքև չոր խոտեր ու թփեր խշրտոց կ'հանէին և մեզի սարսուռ կ'ազդէին, նա մանաւանդ՝ հեռակաց պուրակի մը կիսադալար և կիսաւեր ոստերը խորհրդաւոր ճռճղէին ստուերներ կ'յօրինէին պատերուն և դեռնին վրայ ու սգալի երևոյթ մ'ունէին։ Աստղերը, լուսինն ու պարզ օդը փոքր ինչ մօտս սիրտը բացին։ Զափազանց գոհ էի որ պտրտելով սկսաւ իր սովորական անուշ ժպիտով հետս խօսիլ։

— Ո՞ւրեակ, լսա՛ ինձ, քիչ մը շունչառի։ Օդը շատ դեղեցիկ է, թեթև քամին իմ մոլար խորհուրդներս ցրուեց, բայց ինչ օգուտ, այսօր հանդիստս կորուսի։ Սրտիս խորէն ձայն մը կ'ըսէ ինձ որ դժբաղդեմ։ Իրաւի, հոգիս՝ այս ձմեռային բնութեան նման է. թէև լուսնին պէս անարատ, պաղ նշոյլներ կ'արձակէ, վարդենիին պէս թէև կենսաւէտ՝ միայն չոր բուն ու փուշեր ունի։ Երբ հայրդ տեսնեմ, ինչպէս որ կ'յուսամ, այն ատեն արև, գարուն պիտի տեսնեմ . . . ։

Կէս ժամ պարտէզը ժուռ եկանք, և երբ պարզային աւելցաւ՝ տուն մտանք։ Մայրս գրեթէ բոլոր գիշեր հսկեց, իր մտտուկը շակեց, գոհարները ծրարեց, ամէն ինչ կարգի դրաւ։ Գիշերաշրջիկ ուրուականի պէս դէս ու դէն կ'պտտէր և ուր ուրեմն Սաղմոս կ'քաղէր՝ այդուն սպասելով անհամբեր։ Արշալոյսը ծագելուն նոր աշխոյժ մ'առաւ և ճանբու հագուստը զգաց։ Միակտուր մութ կապոյտ ատի պարեղօտ մ'որ մինչև ոտքը կ'հասնի՛ր, հագաւ և վերէն վար կոճկեց. մէջքը սեղմեց ոսկեհիւս գօտիով մ'որուն ոսկի ճարմանդին վրայ արև մը փորագրուած էր և մէջ տեղը մեծկակ մարգարիտ մը կար։ Սամուրենի վերարկուով մ'իր քնքուշ իրանը պահպանեց, իր մազերն՝ որ սև սաթի պէս էին՝ հիւսեց և արծաթէ վարսակալով մ'ամփոփեց, ապա մատաքսեղէն բազմագոյն շղարշով իր գլուխը պատեց՝ ճակատը կիսովին դոյելով և մէկ ծայրն ետին ձգելով։ Ի վերջէ երկար սև լոգիկ մ'ուսերուն վրայ ձգեց և կարճ գաշնակ մը բոմբտի կախեց։ Այսպէս հագուելէն ետև՝ իմ վրաս գլուխս ալ շակեց ամրապէս և ըսաւ որ երթամ Ատոմը կանչեմ։

Ատոմ՝ վեթուն տարեկան հաստակազմ, ուժեղ, արևակէզ ծերուկ մ'էր, թեպէտ խորագէտ՝ արտաքուստ պարզամիտ և փոքր ինչ գուար-

ճաքան կ'երևէր։ Արծուի քիթը, դող այլ սուր աչերն, ամիտի ու խիտ ունքն իր կերպարանին ազդու և կենդանի երևոյթ մը կ'տային. իսկ անմազ գանկին հետ առատ սպիտակ մօրուսը նշան էր որ շատ ձիւներ կրեր էր իր գլուխը՝ զոր տեսակ մը բաւականութեամբ՝ ստէպ կ'օրորէր և կարծես թէ հին բաներ անդուլ կ'մտմտար։ Խօսելու ատեն՝ սովոր էր շեղակի նայիլ, որպէս թէ աներևոյթ թշնամի մը կ'ցուշանար։ Կարծելով թէ ամէն Հայ պարտաւոր է կամ քահանայ, կամ դպիր, կամ բեռնակիր լինիլ, նախադաս համարեր էր վանք մտնել և եպիսկոպոսի մը փոքրաւոր գրուիլ։ Հետեւապէս քիչ շատ մելան ըներ և Սուրբ Գիրք խառներ էր։ Բայց վերջէն կրօնական կեանքը շատ տաղտկալի դտեր և կարծեր էր թէ աւելի արժանիք կայ դուրսը մաքառիլ քան տգէտ վարդապետի մը փիլօնին տակ փտիլ. ուստի իր սարկաւագի սև զգակը մէկդի նետեր և քնիկ երկիրն՝ Արճիշ հող հերկելու դայեր էր։ Այն տեղ բաւական ատեն աշխատելէն ետև՝ անդամ մը քուրդի մը հետ կռուի բռնուեր և զանի սպանելով Քարդաշ ապաւիներ էր, ուր հաւս իր զօրութեան և բարեպաշտութեան համար անուն ունէր։ Ուշտենց հայրն՝ Ատոմին բայ և ուշիմ կերպարանին հանելով՝ իր սպասաւորութեան առեր և մատակարար ըներ էր. արդ՝ ինչպէս որ դէպքերը կ'հաւաստեն, Ատոմ իր հաւատարմութեամբ մեր տան դրեթէ մէկ անդամը դարձեր էր։

Երբ սենեակը մտայ՝ Ատոմ դեռ կ'քնանար. ձայնէս ընդոստ ելաւ և հարցուց թէ ի՞նչ կայ։

— Ձե՞ս տեսներ, Ատոմ, որ ճանբու համար հագուեր եմ. միթէ հայրս տեսնելու պիտի չերթանք. մայրս քիչի կ'ուզէ։

— Տէր ողորմեա, մրմնաց Ատոմ գլուխը ցնցելով, կ'երևի թէ տանտիկինս այս գիշեր գէշ երազ մը տեսեր է. ինչու այսպէս կ'շտապի, միթէ Ս. Թովմասի ուխտատեղի՞ն է, Բաղաբերդ . . . ։

Այսպէս խօսելով շուտ մը հագաւ՝ լայն տափատ, մոխրագոյն ոչխարենի բաճկոն, հատ չուխայէ կապայ մը. գլուխն անցուց բոլորաձև բրդոտ գլխանոց մը և մօրս առջև ելաւ։

— Բարի՛ լոյս, Ատոմ, ահա ես պատրաստ եմ, դու ամէն բանի հոգ տարի՛ր, ձիերն ապապրեցի՛ր արդեօք, հարցուց մայրս։

— Տանտիկինս, շատ նեղսիրտ ես. քանի մ'օր ևս չե՞ս կարող համբերել, դու որ եօթ տարիէ վեր կ'համբերես։

— Շատ խօսք չեմ ուզեր. որոշումն անսասան է։

— Սակայն ես, տանտիկինս, կ'սասանիմ քանի ուղևորութեան ան-

թիւ դժուարութիւնները միտքս բերեմ։ Երէկուանէ վեր սա մօրուքս կ'փետեմ որ եղբ մը գտնեմ ու չեմ յաջողիր . . . ։

— Ամէն քարոզն կ'տապալի կնկան մ'առջև, որ իր ամուսինը տեսնել կ'փափաքի։ Երէկ դու չէիր ըսողն որ ամէն բան պատրաստեր ես՝ իբրև հեռատես տնտես, արդեօք Նոր դիր մ'ալ հասաս այս դիշեր ձեռքդ։ Անտարակոյս զայն ևս այրած ես, դու որ Զօրայի սրտին ա-ւելի մօտ կ'երևիս, քան ես ու իր զաւակը։

— Տանտիկինս, սուրբ Գրիգոր վկայ, այսօր կրակ կ'փչես, սիրտս կ'ծակես։ Ի՞նչ կ'նշանակէ այդ կասկածդ իմ վրայ։ Ես անսենդ հրամանակատար մ'եմ, բայց կոյր սպասաւոր չեմ։ Ուշտենց ողբմած հոգի տներդ՝ ծանր պարագաներու մէջ իմ խորհուրդս չէր մերժեր։ Երբ Քարդաշի ժամը շինեց, իմ անունս իր գերդաստանին անուան տակ փորագրել և հաւապարքիմ Ապոմ գրել տուաւ։ Եթէ օրին մէկը Զօրայի հետ բնիկ երկիր երթաս՝ պիտի ըսածս ստուգես . . . ։

— Ուրեմն պէտք է նախ Զօրան գտնել։

— Ո՞վ կ'արգիլէ. մինակ գիտէ անդամմը, տանտիկինս, որ եղանակս ձմեռ է։ Դարձուր աչքդ սա կողմը, տես գիմացի Սիւհէնտ լեռն որ ձիւնով պատած է, տես Շօր գետակն որ սառ կտրելու վրայ է։ Այս օդով, փոքրիկ զուկովդ, ինձի պէս ապիկար առաջնորդով, բլուր ու ձոր, գետ ու սահանք երթալ իջնալ խելք չէ բնաւ։ Մանաւանդ հիմակ Ճանբաները շատ վտանգաւոր են, տէրութեան կողմէ հսկողութիւն կ'ընեն։ Սահմանաղլխէն դժուարին է ապահով եղբ մը գտնել։ Ես 'ի հարկին չպիտի ատիկիմ պաշտպանել այդ գեղանի աւանդդ, որ ինձ յանձնուած է Զօրայի կողմէ և կրնայ անակնկալ փորձանք բերել գլուխս։ Աւելի հեշտ է անդամանդեայ գոնձ մը պահպանել ելուզակի մը դէմ քան քեզի պէս չքնաղ էակ մը։

— Ես ինքզինքս ու զաւակս գիտեմ պաշտպանել կամ մեռնիլ։ Կը տեսնեմ սա դաշնիկը, յարեց մայրս՝ գօտիէն կախուած Շիրազի ընտիր զէնքը ցոյց տալով, այս բաւական է ինձ. իսկ դու բան մը վտանգի դնելու երկիւղ չունիս։

— Ճշմարիտ է, իմ կեանքս ձերինէն չեմ գատեր, և ոչ ձեզ Զօրայէ։ Միայն կ'աղաչեմ, տանտիկինս, որ քանի մ'ամիս սպասես. թող դարուն գայ, ձիւնները հալին, օդերը բացուին, կարաւանները երթևեկին անարգել։ Նոյն հաշիւն է. լաւ օդով մեր երեք չորս աւուր մէջ կտրած ուղին, այս ցրտաշունչ եղանակիս թերևս ամիսներ տևէ, և տիպրուինք քարայրի կամ հիւղի մը մէջ փակուիլ։ Ես քիչ շատ փորձ

եմ՝. արդէն քանիցս այսպիսի Ճանրորդութիւններ ըրեր եմ. Սիւնեաց և Ուտի նահանգաց ծակ ու ծուկը գիտեմ, քիչ մնաց վարդապետ պիտի լինէի ատեն մը և Տաթեւու վանքը մնայի . . . :

— Կ'հաւատամ, պատասխանեց մայրս, ալէզարդ մօրուտ և տուած քարոզդ կ'վկայեն ; բայց այժմ քարոզ մտիկ ընելու ժամ չէ, այլ գործելու :

— Բայց դու, սանտիկինս, դեռ ամէն բան չգիտես . . . :

— Արդէն կ'կասկածէի որ չգիտեմ, մրմռաց մայրս :

— Չգիտես որ ուղևորութեան համար կարևորը կ'պակսի . դրամ : Զօրայ մեկնելուն կալուածոց մեծ մասը ծախեր էր, այս և ուրիշ մէկ քանի տուն միայն թողլով, որպէս զի անոնց հասոյթով ապրինք : Հիմակ այն տուներն ալ գրաւած են, կ'ըսեն : Ուստի, եթէ հաճիս, ձեզ կ'առնում՝ Օսմանցւոց երկրին մօտաղոյն սահմանը, կամ Ռշտենց բնիկ երկիրը կ'տանիմ կ'թողում և ես կ'ելնեմ շիտակ Բաղաբերդ կ'երթամ որ Զօրայի վիճակին անձամբ տեղեկանամ . . . :

Մայրս անյողդողդ մնաց : Ատոմ քանի դժուարութիւններ հանէր կամ հնարէր՝ նուարդի կասկածներն ու հետևապէս Ճանբայ ելնելու փափաքն ևս քան զևս կ'զրգռէր : Այս խօսակցութեան միջոցին դուռը զարկին . Ատոմ բացաւ : Տէրութեան մի պաշտօնական ձեռքն արքունի հրամանագիր մը բռնած ներս մտաւ : Այս պաշտօնականն իմացուց թէ պարտաւոր ենք քսան և չորս ժամու մէջ Պարսկաստանէն դուրս ելնել, թէ Զօրայի բոլոր անշարժ կալուածքը գրաւեալ են, թէ երկու տարիէ վեր Զօրան գտնելու համար եղած խուզարկութիւնները նոր ելեւան հաներ էին որ նա տէրութեան դէմ ապստամբ մ'է, և իբր այնքինքը գլխատութեան, և ընտանիքը մշտատև բանտարկութեան դատապարտեալ : Սակայն Ն. Վ. Շահնշահն այս վերջին վճիռը մեղմեր է սա պայմանաւ որ եթէ որոշեալ պայմանաժամէն ետքը Դավրէժ մնանք՝ գործադրուի այն :

Մայրս կարծես թէ պաղտնի կ'հրճուէր այս արքունի հրամանին վրայ, վասն զի Ատոմի բոլոր բարուրանքն անով յօդս կ'ցնդէին . ուստի՝ երբ պաշտօնակալը մեկնեցաւ՝ մայրս դնաց մատուռը բացաւ և գահարներն առնելով Ատոմին առջև դրաւ ու ըսաւ .

— Ատոմ, մինթէ ասանք կ'բաւեն մեր ուղևորութեան ծախսը հոգալու :

Ատոմ ոչ 'ի բերան մնաց :

ՔՆՆԱԿԱՆ

Պ. Է. ՏԸ ԺԻՐԱՐՏԷՆ

Մամուլի ազատութեան այս ախոյեանը, գաղափարներու այս հզօր շարժիչը՝ որ ընկերական խնդիրներու լուծում տալու համար երեսուն տարիէ վեր՝ կ'մղի իր ազդու և եփուն գրչով, այս օրերս նոր գործ մը ևս ի լոյս ընծայեց, որուն անունն է, ՊԱՏԺԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՁԼՐԱՑ։* Երևելի գրագիտին այս գործն՝ որ տասս տարուան աշխատութեան արդիւնք է, իր ԽՈՐՀԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ† գրքին զուգականը կրնայ համարուիլ։

Պ. Ժիրարտէն այս վերջին հմտալից երկը հրատարակելով՝ ուզեր էր հաստատել թէ՝ մարդ ոչ միայն խորհելու, այլև ամէն խորհածն ի դիր առնուլ հրատարակելու քաղաքական ազատութիւն ունի։ Թէ տպագրական ըսուած կանոններն երևակայական յանցանաց դէմ մնոտի և անօգուտ ձևնքեր են, թէ՝ մամուլի գործած ոճիրները՝ թէ կառավարութեան, թէ կրօնի, թէ բարոյականի, թէ անձի, և ամէն տեսակ հիմնարկութիւններու դէմ պարտին անպատիժ մնալ, ըստ որում՝ լոկ հանուրին կարծեաց ատեանին առջև դատելի են, ըստ որում՝ որ և է գրաւոր յարձակում, պարսաւ, նոյն իսկ նախատինք անպէտ, անվնաս են, տպեալ ԽՕՍՔՆ ինքնին ոչ ինչէ, և միայն ԳՈՐԾ դառնալուն իր բնութիւնը կ'փոխէ և ՊԱՏԺԱԿԱՆ օրինաց պարտի ենթարկիլ։

Երբ՝ Պ. Ժիրարտէն՝ 1864ին այս գիրքը կ'յօրինէր և կ'ջանար համոզել Պ. Ռուէն՝ Նափոլէօնի փողհարն՝ որ մամուլի ազատութիւնն ըստ կարի ընդարձակէ, ինչպէս ընդարձակեր էր առևտրական ազատութիւնը; չէր երևակայեր անշուշտ՝ այն միջոցին որ ծերակուտին անդամ լինելու հրամանին կ'սպասէր, որ Թիւերեան նորաձև հասարակապետութիւն մը պիտի գայ և ոչ միայն մամուլի արգէն սեղմեալ ազատութիւնը պիտի սեղմէ, այլև լրագիրներ պիտի խափանէ, խմբագիրներ պիտի հալածէ, բանտի և մինչև անդամ մահու պիտի դատապարտէ։ Բայց ինչ փոյթ, թող կառավարութիւններ իրարու յաջորդեն, թող այսօր կարմիր, վաղն եռագոյն, ուրիշ օր մ'ալ սպիտակ դրոշակ ծածանի Դուքրիի հրակէզ պալատին վրայ, Ճշմարիտ սկզբունք մը միշտ Ճշմարիտ կը մնայ, և Պ. Ժիրարտէն՝ վերջին պատերազմին տպաւորութեան ներքև՝ ջվհատիր և այսօր կ'ելնէ, խօսելու բացարձակ ազատութեան իբրև անմիջական հետևութիւն, գրելու բացարձակ ազատութիւն կ'քարոզէ։

Այս նոր վարդապետութիւնն, որ թերևս այլանդակ ցնորք մ'երևի՝ մանաւանդ Գրանսայի՝ ուր ֆէոդալին ըրած աւերումները դեռ կմխան, խորին մտածութեան նիւթ կ'ընծայէ։ Քանի՛ քանի նոր սկզբունքներ այլանդակ կ'երևին, որ այսօր իրացած են, բայց դարձեալ որչափ պարբերական կ'թուի անպատիժ գրչելու ազատութիւնը։ Պ. Ժիրարտէն՝

*Du droit de punir. †Les droits de la pensée.

թէև դաղղիացի՝ մարդկութեան համար կ'աշխատի, Ճշմարտութիւն մը կարծէ դտնել, և չհարցներ թէ արդեօք իր ժամանակին, տեղւոյն, ազգին կ'յարմարի, այլ զայն իր ամբողջութեան մէջ կ'հրատարակէ և ապագային կ'կտակէ։ Արդարև վսեմ և բեղմնաւոր կտակ եթէ երբէք դործադրուի չէ թէ 'ի Ֆրանսա, վասն զի Ֆրանսա միշտ կ'երկնէ և երկնածն ուրիշը կ'դործադրէ, այլ այլուր, այն ատեն եդեմական օրէնքը պիտի վերադառնան, պատժական օրէնք, բանակներ, զինդաներ պիտի վերնան և ամենուրեք բանականութիւնն ու արդարութիւնը պիտի տիրապետեն։ Այսպիսի արքայութիւն մը թէև՝ եթէ ոչ մենք, կը փափաքինք որ մեր թոռները տեսնեն, սակայն փոքր ինչ թերահաւատ ենք այս մասին։ Մեզ չընկնիր առարկել հեղինակին՝ որ տաս տարուան խորհրդածութեան արդիւնքը դիտոց վիճաբանութեան կ'ենթարկէ, և ամենուն պատասխան տալու պատրաստ է, այլ այսչափ կ'ժտինք միայն ըսելու Պասդիայի հետ՝ թէ մարդս կոպարեալ էակ մը չէ, այլ կոպարեալ դործելի, թէ մարդկային բնութիւնը նիւթ չէ միայն որպէս զի հնարին լինի ըստ հաճոյս կազմել, այլ ազատ ոգի մ'ունի, թէ չարիքն ու բարիքն անոր բնակից են, թէ բացարձակ դործելու ազատութիւն, բացարձակ հաւասարութիւն կ'պահանջէ, մինչդեռ աշխարհս անհաւասարութեանց Ներդաշնակութիւն մ'է, թէ քաղաքակրթութիւնն աւելի շատ դահիճներ, բանտեր, խուլ ոխակալութիւններ ունեցած է ցայսօր, քան անքաղաքակրթութիւնն, և թէ բանն (raison)՝ զոր իր նոր աշխարհին օրէնսդիր կ'կարդէ Պ. տը Ժիրարտէն, բաւական չէ հաշտ աչօք դիտել տալու այն ահուելի խարութիւններն որ ընկերութեան զանազան դասերու մէջ սոսկալի անջրպետներ կ'բանան։

Մեզի՝ խօսելու բացարձակ ազատութենէն՝ զոր կ'ընդունինք, դործելու բացարձակ ազատութիւն հանելու պահանջումը բուռն կ'երևի։ Այս դրութեամբ՝ ըստ որում՝ խօսքն՝ ինքնին անվնաս և վաղանցիկ՝ մտածման չափ անհունս կ'այլասերուի, դործն, ինքնին իրական՝ նոյն այլակերպութեան պիտի հետևի։ Արդ՝ եթէ դործն՝ որ և է այլանդակ մտածման թարգման լինի, հարկաւ ընկերութիւնն անընդհատ յեղաշրջութեան կամ անիշխանութեան պիտի դատապարտուի։ Իսկ եթէ բանին ըսես. դու միշտ օդտակարն, արդարը, Ճշմարիտը պիտի արդադրես, միթէ նոր տեսակ բռնութեան իշխանութիւն մը չէս հաստատեր, քանի որ կատարեալ Ճշմարիտը, կատարեալ օդտակարը, կատարեալ արդարը մարդուս տրուած չէ դտնել։ Անուրանալի է որ Պ. Ժիրարտէնի սկզբունքը միտիթարական է, մարդկութենէ չյուսահատիր, մարդասիրութեան վսեմ զդացում մը կ'սլարունակէ, և մարդկային սխալականութեան ներածին չափ թերևս օր ըստ օրէ դործադրութեան սահմանին մէջ մտնէ։ Ուստի այս նկատմամբ կ'յորդորուինք՝ անոր յառաջաբանը, թէև փոքր ինչ երկար՝ բանասէր ընթերցողին համար թարգմանել։

ԳՈՐԾԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

«Ամէն բան ըսելու ազատութիւն կ'ուզես դու. ուրեմն, ամէն բան գործելու ազատութիւն կ'ուզես։» Ահա այսպէս կ'կշտամբէր զիս Պ. Լուի Վէյօ, քսան տարի առաջ, 1850 յունվարին, երբ Ինդիէր լրագրին խմբագրապետն էր։

Այս ծանր կշտամբանքին, զոր ուղղակի երեսիս կ'զարնէր, Բրէ-լրագրին միջոցաւ. այսպէս պատասխան տուի. «Ի՞նչ յարաբերութիւն » ունի խորհելու ազատութիւնը գործելու ազատութեան հետ, ամէն » բան ըսելու իրաւունքն ամէն բան ընելու իրաւունքին հետ. ամէն բան » ըսելու իրաւունքը ցնորք չէ՞ր ինդիէր մ'է. ամէն բան ընելու իրաւունքը հիմար » ինդիէր մ'է։ Եւ այս բանս փորձով կ'հաստատուի։ Եթէ ճշգրիտ նկա-» ռագիր մը պատրաստես, իսկոյն անոր տեղը կ'բռնէ թատանցիկ թելա-» դրութիւնն։ Եթէ թելադրութիւնը հալածես, ակնարկութեան կը » փոխուի։ Եթէ ակնարկութիւնը դատապարտես, այլաբանութեան կը » դառնայ։ Եթէ այլաբանութիւնն արգելուս, ենթադրութիւնն երե-» ւան կ'ելնէ։ Եթէ ենթադրութիւնը սանձես, երկբայական ձևով իր » օղնութեան կ'կոչէ հարցումը։ Սակայն չես կարող արգիլել նենդալի-» լութիւնը, խորամանկ ստացողը (démenti), շինովի ջատագովու-» թիւնն, որոնք՝ արգիլեալ բան մ'ըսելու համար՝ հարիւրումէկ տեսակ » կերպեր են։ Ամէն բան ըսելու իրաւունքն իրեն բնական ուղղիչ ունի, » ամէն բան հակառելու (contredire) իրաւունքն։ Այս ուղղիչն ամէն » բան գործելու իրաւունքին կ'պակսի։ Կան բաներ զոր մարդ կատա-» րեալ ազատութիւն ունի ընելու, սակայն կան նաև բաներ զոր մարդ » որ և է ձևով ու պատրուակաւ ընելու իրաւունք չունի։ Որ և է » պատրուակի համար իրաւունք չունիս սպանելու, բռնաբարելու, » գողնալու։ Այս մասին արգելքը բացարձակ է, աստիճաններ » չկան։ Իսկ՝ ընդ հակառակն, ինչու համար մտոտի բան է ըսելու ա-» զատութիւնը սահմանել ուզելը, վասն զի այս պարագայիս մէջ ձևը » հիման կ'ուշխէ և ոչ ինչ չես շահիր եթէ արգիլես որ այս ինչ ձևով » չբացատրեն բան մը զոր կարող չես արգիլել ուրիշ ձևով մ'ըսելու։ » Ուստի դժվարի է երկու իրարու անմման և տարբեր ազատութիւններ » նմանցնել։ Ամէն բան ըսելու ազատութիւնը պարտի մնալ անսահման, » սա դերագոյն պատճառաւ որ անօգուտ է զայն սահմանել։ Իսկ ա-» մէն բան գործելու ազատութիւն չկայ և չկրնար լինիլ։»

Եմ առարկուիս այս պատասխանս տալուս հետևեալ օրը, պատաս-

խան մ՚որ՝ 'ի սկզբան եռանդագին վիճաբանութեան ժամանակ՝ ինձ հատու և յաղթական երևցեր էր, միտքս կասկած մը կ՚գար որ յուշիկ մտածութեան արդիւնք էր։

Առանձինս խստիւ հարց ու փորձ կ՚ընէի և վշտագին կ՚ըսէի իւրովի թէ արդեօք անհեթեթ և հասարակ տեղի մ՚ըսած եղայ, թէև ասոնք իմ երկու թշնամիներս են, գործելու ազատութիւնն ըսելու ազատութեան նմանցնելու մերժելովս, մինչդեռ ըսելու ազատութիւնը խորհելու ազատութեան յար և նման բաներ էի։ Եթէ ազատութիւնն անբաժանելի է, ըսի ինքնահարց, ինչ իրաւամբ, խորհելու ազատութեան և ըսելու ազատութեան մէջ գծուած սահմանը ջնջելէն ետև՝ անջինջ պահելու կ՚ելնեմ ըսելու ազատութեան և գործելու ազատութեան մէջ գծուած սահմանն։ Ինչ որ էապէս անբաժան է, առ. հարկի չկրնար բաժնուիլ։ Պ. Լուի Վէյօի տուած պատասխանս, զոր յաղթական կ՚համարէի, տրամաբանութեան մաղէն անցնելէն ետև՝ լոկ ճշմարտանման կ՚գտնեմ։ Եթէ խորհելու ազատութիւնն ըսելու ազատութիւն կ՚ենթադրէ, ըսելու ազատութիւնն ալ գործելու ազատութիւն կ՚ենթադրէ։ Արդ՝ միթէ չար գործելու ազատութիւնը պիտի ընդունի՞մ։ Ինչո՞ւ չէ, քանի որ չար խորհելու ազատութիւնն ընդունելէս ետև՝ չար ըսելու ազատութիւնն ալ կ՚ընդունիմ։ Բայց այն ատեն ընկերութիւնն ի՞նչ կ՚լինի։

Քսան տարիէ վեր կ՚յուզէ միտքս այս խնդիրն, և 1850էն հետէ՝ օր չէ անցած որ մտապէս նոր հարցաքննութեան ենթարկած չլինիմ զայն, իմանալու համար թէ արդեօք ճշմարտութեան պէս՝ ազատութիւնն ալ մի՞ է, այո՛ կամ ոչ։

Ուստի հասուն, խիստ հասուն կերպով մտածելէն ետև՝ այսօր կը զամ յայտնելու թէ արդարև ազատութիւնը մի է. այո՛, ազատութիւնն անբաժանելի է, վասն զի երբ բաժնուի՝ ազատութիւն լինելէ կ՚դադրի և բռնութեան կ՚դառնայ։

Ահա պատմութիւնը պատրաստ է իմ ըսածս հաստատելու։

Ինչ որ ժամանակ մը պատապարտուած է, դատապարտուած չէ ուրիշ ժամանակի մէջ։ Ինչ որ երկիր մը կ՚արդիլէ, ուրիշ երկիր չարգիլեր։ Ինչ որ կրօնները կ՚նուիրագործեն, տարբեր կրօններ կ՚մերժեն։ Ինչ որ եղեռն է այս անուամբ, անուն փոխելով եղեռն լինելէ կ՚դադրի։ Քանի որ ընկերութիւնը համակերպելով՝ իբրև չարիք կ՚ընդունի հաւաքական սպանութիւնն ու գողութիւնն, որ պատերազմի և աշխարհակալութեան անուամբ կ՚փառաւորին, ինչո՞ւ համար չպիտի ընդունի՝ նոյն ի-

բառամբ՝ անհատական սպանութիւնն ու գողութիւնն, եղեռնի ու յանցանքի անուամբ նշանակելով։ Միթէ անհատական սպանդն ու գողութիւնն երբէք այնքան արիւնահեղութեան և աւերումներու պատճառ եղած են, որքան արիւն և աւերակ պատճառած են հասարակական սպանդն ու գողութիւնն, որոց համար սակայն ազգերը յաղթական կամարներ կ'կանգնեն։ Եթէ 'ի բնուստ և այժմ պատերազմու աշխարհակալութիւններ չլինէին, արդեօք մարդուս միտքը պիտի կարենար ըմբռնել որ անոնք ընկերութեան վիճակին հետ միաբան լինին։ Անշուշտ ոչ։ Սակայն ինչ որ անհատական պիտի լինէր այժմ ճշմարիտ է։ Ասի կ'դրդէ զիս խորհելու և պնդելու որ, եթէ սպանդն ու գողութիւնն անպատիժ մնային, ընկերութիւնն անոնց հետ պիտի վարուէր, ինչպէս կ'վարուի պատերազմի և աշխարհակալութեան հետ։ Պիտի բաւէր միայն որ այս այսպէս լինէր որ նոյնն իրեն պարզ թուէր, ինչպէս կ'բաւէ իրեն որ այսպէս չլինի, որպէս զի նոյն բանն իրեն հրեշական թուի։

Մարդկային ընկերութիւնն անդադար պատերազմի և աշխարհակալութեան ենթակայ գտնուելովն արդեօք կ'վայելէ՞ այն վիճակը զոր պիտի վայելէր եթէ այս երկու վտանգն, այս երկու աղէտքն, այս երկու պատուհասը չլինէին։ (Կ'ժողովեմ ասոնցմէ բոլոր այս բացատրութիւններն որ ընթերցողն անոնց մէջէն ուզածն ընտրէ։) Ես չեմ կարծեր. և ոչ կրնայ կարծել։ Երևակայէ մի անգամ թէ ինչպիսի լինէր ընկերութիւնն առանց պատերազմի և աշխարհակալութեան։ Քաղաքակրթութիւնն իր գերադոյն զօրութեան պիտի հասնէր, աշխատութիւնը կարելի և պարտաւոր եղածին չափ պիտի արտադրէր. զինուորական պարտաւորիչ ծառայութիւնը դադրելով՝ ամէն տարի երկրագործութեան և ճարտարութեան օգտակար մարդիկ չպիտի կորզէր առնուր. ազգային պարտքն արագապէս պիտի վճարուէր հասարակաց հասոյթից ընդ փոյթ շահանալով. տուրքը լոկ հասարակրդային հանդանակ մը և քանի մ'որոշ վնասուց դէմ ապահովութեան տրիտուր պիտի լինէր. և այս տիեզերական բարօրութիւնը պիտի հասնէր։ Ի վերջ՝ գիտութեան, արուեստի, արտադրութեան, հարստութեան իշխանութիւնն ամենուրեք պիտի տիրէր, փոխանակ բռնաբարութեան, հարստահարութեան, կործանման և թշուառութեան իշխանութիւն լինելու։

Կ'հաստատեմ և կ'պնդեմ թէ՝ այն օրն որ պատերազմու աշխարհակալութիւնն իրենց սպանդի և գողութեան դպրոցները գոցին և մարդկա-

յին բանականութիւնը թիւրելէն դադրին, այն օրէն անհատական մարդասպաններ և գողեր այնքան հաղուագիւտ պիտի դառնան՝ որ պատիժն, որուն աղբիւրը կ'փնտռէ այս գիրքս, ինքնին պիտի անհետի։

Եթէ մարդ մ'աշխատութեամբ քան գողութեամբ աւելի շահիլ կարենալով՝ ստիպուէր, չէ թէ մեծ քաղքի մը զօրանոցին մէջ իր նմանը սպաննել, այլ իր գեղին դպրոցին մէջ կարդալ և գրել, բանադատել և հաշուել սորվելու, միթէ պիտի գողութիւն ընէր։

Եթէ գողութիւնը չպատժուէր, երբ գողը տեսնէր որ անպատիժ կողոպտածն ուրիշ մ'ալ իրմէ կ'կողոպտէ անպատիժ, ի՞նչ առաւելութիւն պիտի գտնէր կողոպտելովը։

Ո՛չինչ, բոլորովին ոչինչ. վասն զի իրմէ տկարագոյն կամ նուազ ճարպիկ մարդ մը կողոպտած պիտի լինէր, որպէս զի՝ ըստ կարգի՝ ինքն ալ աւելի ճարպիկ կամ զօրաւորագոյն մէկէ մը կողոպտուի։

Այս բանս անմտութիւն պիտի լինէր։

Թիղտրամաբանը, թուաբանը, դաստիարակը յայտնապէս հաւաստեն թէ գողութիւնն անմտութիւն է, և այն ատեն ակներևութիւնը (évidence) չպիտի յամի մեծագոյն զօրութեամբ գողութեան դէմ մաքառիլ քան թէ դատաստանը, բանտն ու բանտապահը։

Ստէպ գողութիւնն առ սպանութեան լինելով ինչ որ է պատճառն առ հետևութեան, եթէ գողութիւնը սպանութեան ճարակ տալէն դադրէր, ի՞նչ պիտի լինէր սպանութիւնն, 'ի բայց առեալ զառանցութեան քանի մը պարագաներ։ Պիտի լինէր՝ ինչ որ կ'լինի վտակ մ'որոնն աղբիւրը ցամքած է, պիտի լինէր՝ ինչ որ կ'լինի վերք մ'որ կ'չորնայ ու կ'գոցուի, այսինքն պիտի անհետէր։ Ուրեմն սպանութիւնը հետզհետէ հաղուագիւտ դարձելու համար, ուրիշ ճար չկայ բայց միայն ճղմել զայն իր հաւկթին մէջ, որ է գողութիւնն, ինչպէս որ գողութիւնն ալ հետզհետէ նուազելու համար պէտք է ջնջել անոր սերմունքն՝ որ են տգիտութիւնը, թշուառութիւնը, դատարկապորտութիւնը։ Միթէ հնարաւոր է դատարկապորտութիւնը ջնջել, անշուշտ. միթէ հնար է տգիտութիւնը բառնալ, անտարակոյս։ Միթէ հնարքիրն է թշուառութեան յաղթել, նախ բաժնելով զայն յարժանի թշուառութիւն և յանարժան թշուառութիւն, ապա՝ պատահական թշուառութիւն, ժառանգական թշուառութիւն և ախտաժէտ թշուառութիւն։ Այս մասին իմ խորին համոզումս սա է որ ճակատամարտն անվրէպ շահելու համար, պէտք է զայն անվեհեր մղել միշտ ընդ առաջ նայելով և երբէք ետև։

Եթէ այս եռակի վստահութիւնս թելադրող գաղափարները սխալ մտնք չեն, իրաւունք ունիմ ուրեմն գործելու ազատութիւնն ըսելու ազատութեան կցորդել, նոյն իրաւամբ որ այժմ ընդհանուր հակումը կայ՝ ըսելու ազատութիւնը խորհելու ազատութեան յարակից գտնելու։

Այս երեք ազատութիւնները միայն մէկ ազատութիւն կազմելով անբաժանելի կ'մնան, և արդար է որ այսպէս մնան։

Ահա հիմակ պիտի հաւաստեմ։

Ի՞նչպէս խորհելու ազատութիւնը մոլորելովն իր մոլորումը պիտի իմանար՝ եթէ խօսելու ազատութիւն չլինէր, որ անոր վրիպակն երեւան կ'հանէ։ Ի՞նչպէս խօսելու ազատութիւնը թիւրելովն՝ իր թիւրութիւնը պիտի տեսնէր, եթէ գործելու ազատութիւն չլինէր որովանոր թիւրութիւնը կ'հաստատուի։ Գործն այնքան պիտանի է խօսքը ստուգելու, որչափ կարևոր է խօսք մտածմունքը ստուգելու։ Ուրեմն այս երեք ազատութիւններն, խորհելու ազատութիւն, խօսելու ազատութիւն, գործելու ազատութիւն միասին, միահաղոյն, լիուլի կ'գործածուին և այն մարդն որ իր բանը (raison) բանադատութեան վարժեր է չարիք գործելու ազատ չպիտի լինի, ինչպէս չար խօսիլ և խորհելու ազատ չպիտի լինի։ Երբէք մարդ կամովին թիւրը Ճշմարտէն նախադաս չդասեր. թէ մտաք, թէ բանիւ, թէ գործով, ոչ, բնաւ կամովին իր բանը չուրանար։ Որքան դժուարին է մարդուս անսովորիլ (désapprendre) ինչ որ տրամաբանութիւնը կ'ապացուցանէ, երբ արդէն բանադատութեան սովորած է, նոյնչափ է նաև անսովորիլ որ 2 բազմապատկեալ 2ով հաւասար է 4ի, երբ կանխաւ թուաբանութեան վարժ է։ Եթէ երբէք հաշուել գիտցող մարդն ելնէր համոզուիլ ուզէր թէ 2 բազմապատկեալ 2ով 5 կ'ընէ, չպիտի յաջողէր։ Ուրեմն եթէ կը փափաքիս մարդս ըստ պատկերի քաղաքակրթութեան շինել՝ պէտք է որ անոր մէջ եղած սանձը բռնես առաջնորդես։ Այս սանձը՝ վիշտը չէ, որ կ'զրդռէ, երկիւղը չէ, որ կ'նուաստէ, ոչ, այս սանձը բանականութիւնն է։ Զմարդ պատժող ընկերութիւնն իր իրաւունքը կ'անցանէ զանցանէ, զմարդ չկրթող ընկերութիւնն, իր պարտաւորութեան կը դրժէ։ Մի՛ պատժեր մարդն, այլ զանի կրթէ, և ընկերային պղտոր միջավայրը հետզհետէ կ'մաքրի։ Այն ատեն ակներև երևան պիտի գան այն անպատեհութիւններն ու անկարգութիւններն որ այժմ չեն տեսնուիր կամ անոնց առջև անուշադիր մնալու վարժ աչքը չեն վիրաւորեր։ Այն ատեն մարդուս վերաշինութիւնը պիտի կատարուի ընկերութեան կերպարանափոխութեամբն։ Ի՞նչ տեսակ այլափոխութիւն պիտի լինի

այս։ Տրամաբանութեան հրամայած կերպով պիտի լինի, որպէս զի անքաժանելի ազատութեան իշխանութիւնը մարդկային բանականութեան իշխանութիւնը լինի։ Բայց տակաւին բուն խնդիրն այս չէ։ Ամենէն ստիպողականն է գիտնալ թէ այս կերպարանափոխութիւնն ինչպէս 'ի կատար պիտի հասնի։ Միթէ բնապէս պիտի կատարուի վերահաս յեղափոխութեան մը միջոցաւ, որ նախ քաղաքական և ապա 'ի հարկէ ընկերային պիտի դառնայ, թէ ոչ գիտնապէս, յառաջադիմանցումներու յամրաքայլ միջոցներով պիտի կատարուի։ Իմ կարծիքս սա է որ եթէ յեղափոխութիւն մը գալով՝ շղթայազերծ՝ ամենէն յիմարական պահանջումներ, կոյր զայրոյթներ, սխալ դաղափարներ թափէ ընկերութեան վրայ, այս կերպարանափոխութիւնը պիտի վտանգի մէջ դնէ և 'ի գլուխ չպիտի տանի։ Ուստի փափաքելի է որ փոքր առ փոքր անցումներու շնորհիւ կատարուի այն։ Բայց որոնք պիտի լինին այս անկումներն, ահա խնդիրը զանոնք փնտռելն է . . . . . :*

Համարձակէ հաստատելու թէ մարդ, մարդու եղբայրն, իրաւունք չունի իր նմանն ու հաւասարը պատժել։ Համարձակէ հաստատելու որ եթէ ընկերութիւնն ինքզինքը պաշտպանելու իրաւունք ունի, այս իրաւունքը դործածած բարբարոս միջոցներով չունի, որ աւելի կ'վնասեն իրեն քան կ'օդտեն, որ աւելի կ'սպառնան իրեն քան կ'պաշտպանեն։ Համարձակէ հաստատելու թէ ապուշը կամ անմիտը՝ մարդասպան կամ դող լինելէն արդիլելու համար, լաւագոյն միջոցներ կան և պիտի գտնուին, քան թէ ընկերութեան այս դիրքին բանտապահներու և դահիճներու դիրքն աւելցնելու միջոցն։ Այս յանդուգն հաստատութեան դրդռելիք առաջին զգացումը պիտի լինի թերահաւատութիւնն, ապա թերհաւատութիւնը պիտի անցնի՝ խորհրդածութեան տեղի տալու, խորհրդածութիւնն ալ նոր առարկութիւններ պիտի ծնի, որոնք՝ ըստ կարգի՝ լուծումներ պիտի բերեն։

Եւ երբ ընկերութիւնն առանց բանտապահի և դահճի ապրի, նուազագոյն մարդասպաններով և գողերով, այս բանս իրեն այնքան պարզ պիտի երևի, որչափ պարզ կ'երևի իրեն այժմ առանց վերիներու և ստրուկներու ապրիլը, թէև շատ դարեր այնպէս կարծէր թէ անհնար է իրեն առանց անոնց դոյանալ։

*Այս տեղ հեղինակը կ'խոստովանի թէ նոր սկզբունքի մը գործադրութիւնը մեծ դժուարութիւններու կ'հանդիպի, սակայն ասով անոր ճշմարտութիւնը չխախտիր, թէ չոգին՝ որ այժմ անհուն զօրութիւն մ'է, զսպելու համար քանի՛ քանի՛ ներդութիւն, աշխատանք քաշեր է մարդ՝ որուն հանճարն անձանձիք է, և մինչև որ նիւթական արդելքներու չյաղթէ չդադրիր։ Ծ. Խմբ։

ԱԶԳԱՅԻՆ

—

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 20 դեկտ. 1871։

Աղէ՛ բարեկամ, Քանի մ՚ամսէ վեր խօսքիս թելը կտրեր եմ, վասն զի քօլէրան՝ այս շուտիկն՝ որ դեռ մեր օձիքը չթողուց, փաքանդէնա ամնուամբ մեր մէջտեղը պատնէշ մը կանգներ է, որով նամակները բաւական ատեն թղթատարին տփին մէջ մաշելէն ետև՝ կ՚ծակծկուին, կը ծխոտին և ապա ձեռքդ կ՚հասնին եղեր . . . ։ Ի՞նչ հարկ կայ այս ծանր պատժին ենթարկել անվնաս թերթեր. միթէ այնքան աղտոտ են, միթէ մահու անօթներ, Օրսինիի հրաշունչ դնդակնե՞ր են որ շոշափմամբ պայթին և կարդացողն այրեն լափեն։ Կ՚երևակայեմ որ այս լրաթերթը խաւարասէր, այն ծանծաղամիտ, ուրիշ մը թունաւոր լինի, բայց մահատո՞ւ, երբէք։ Այժմ զօրաւոր դեղաթափ մը կայ՝ հասարակութեան ուղիղ դատողութիւնն՝ որ եթէ երբեմն բռնասէր, սովորաբար արդար դատաստան կ՚կտրէ և անմարսելի ստութիւններ դրողին երեսին կ՚փսխէ։ Ուրեմն քանի՞ եսասէր և երկչոտ է մարդս՝ մանաւանդ դուք որ թող աշխարհ այրի տունս մնայ ձերծ ըսելու պէս՝ Կլազոմէն կղզոյն վրայ գրեր էք ձեր յոյսն և հեռուէն կրակը կ՚գիտէք, թէև ըստ իս, որչափ որ բժշկական գէրբօյ չունիմ՝, եթէ Զինաստանի պատն իսկ քաշես քօլէրական ապականակիր հովին, ջրին, մթնոլորտին բոլորը՝ դարձեալ չես կարող անոր ընթացքն արգիլել, երբ անտեսանելի ճանբով մ՚ընթանալու հակում մ՚ունենայ։ Տաճիկն այս մասին աւելի մարդասէր է. եթէ ճակատս գրուած է, ինչ զգուշութիւններ որ ընեմ պարապ է, պիտի մեռնիմ կ՚ըսէ և կոյուղիներ, ճահճներ անմաքուր կ՚թողու, զգրութիւններ, ժահահոտ նիւթեր կը կուտակէ և բաղմադիմի վտանգներու մէջ տան դուռն ու երդը բաց կը պահի։ Ո՞ր ստոյիկեանդ այս երկայնմտութիւնն ու արիութիւնն ունի։ Իրաւ է որ քօլէրայէ ճարակող թաղերու բոլորտիքը շղթայ կ՚քաշէ հաղորդակցութիւնն արգիլելու մտօք, սակայն գնա՝ ի մտուստ դիտէ, և պիտի տեսնես որ տեղ մը ծածուկ ելք մը կայ ու անց ու դարձ. ճշմարիտ պատկեր արդի քաղաքականութեան որ՝ ի վերին երեսս մեծամեծս կ՚խոստանայ, կ՚ապահովէ և միշտ փախստի ծակ մը բաց կը թողու . . . ։

Ատեն մը Պոլսի մէջ համաղգային յանձնակումբ մը կազմուեցաւ որպէս զի քօլէրայի առաջն առնելու միջոցներ մտածէ, միջոցները մտածեց, բայց այս անգամ փոխանակ 1865ին պէս՝ պատուհասը վարէն

գալու, վերէն եկաւ, Մէքքէի ճանբան չբռնեց, այլ Քօնիսպէրիի։ Քանի՛ քանի հիւանդութիւններ՝ քօլէրային նման՝ մարդկային դիտութեան քիթէն կ'բռնեն։ Կ'երևի թէ այս դարս ձախորդ դար մ'է, և եթէ կ'ուզես, ինչպէս ռամիկը լոկ շրթով կ'ըսէ, աշխարհիս վերջն է։ Պատերազմ, սով, սրածութիւն, չրհեղեղ, հրկիզութիւն, երաշտ, ծաղիկ, զոյն զոյն ախտեր՝ բնութեան ինդրոց կարգն է, զորս հարկաւ ոչ քաղաքագէտն, ոչ բժիշկն, ոչ երկրաբանն, ոչ բնագէտը կրնայ լուծել, կ'ըսեն, այլ միայն Աստուծոյ նախախնամութիւնն որ փոքր ինչ յետամնամ կ'թողու մեզ մանաւանդ։ Եթէ ասենց աւելցնես՝ իբրև զուարճալիք, հարստահարութեան, սպանութեան, առևանգի, գողութեան դիպուածներն՝ այն ատեն թեթև դաղափար մը կ'ստանաս աշխարհիս բանին վրայ։

Բայց Հայն այսպիսի յուսահատական վիճակի մէջ չյուսահատիր. ողջայ չէ, այլ հաշմատ ծեր մ'որ դիտութեամբ երիտասարդանալ կ'ուզէ, և մինչև անդամ սրաշարժութիւն սորվիլ կ'փափաքի։ Կ'տեսնեմ, բարեկամ, սա դարևոր սարուն, ինչպէս աչքը բացեր է։ Օդին մէջ եղէկտրականութիւն մը կայ, ինչպէս Թերևս ըսէր Հիւկօ, որ իր ըղեղը, սիրան ու մարմինը կ'ցնցէ և դլխէն վեր բաներու կ'ձեռնարկէ։ Թղուկ մը, իրաւ, տիտանիերու մօտ, բայց միթէ ճանճին և առիւծին առակը չլիտե՞ս։ Այնչափ կ'բզզայ Ընդհանուր ժողովին, լրագիրներու, ընկերութիւններու, վարժարաններու, լսարաններու, ընթերցատուններու մէջ, որ 'ի վերջէ իր ներկայութիւնն զգալի և Թերևս ուշադրութեան արժանի պիտի ընէ. քա՛ջէ. կեցցէ՛ Հայութիւն, որ շատ դարեր ետին կամ առջևը նայելուն կորաղլուխ արձան մը դարձեր էր. քանի մ'օրէ վեր ընդ առաջ կ'նայի ու կ'ողևորի։ Մի՛ կատակի առնուր իմ խօսքս։ Թէև անորոշ, շեղակի, այլ իրական շարժում կ'ընէ Հայը։ Հիմակ իր դատը ջրպաճէին, ազգապետին, առաջնորդին, ամիրային, պէյին, էֆէնտիին հետ չէ, այլ ուղղակի տգիտութեան, աղքատութեան, բռնութեան, կառավարութեան հետ։

Տգիտութեան կ'ըսէ. Դու իմ վաղեմի թշնամիս ես, օտարասիրութեան, կրօնափոխութեան, երկպառակութեան դէմքով՝ օձի պէս տունս մտար և անոր հիմերը քանդեցիր, ա՛լ դլուխդ պիտի ճղմեմ, բայց ճղմելու յարմար եղանակ, ղէնք կ'փնտռեմ։ Աղքատութեան կ'ըսէ. Կարծէի թէ իմ դանձս միակ երկինքն է, երկրիս վրայ ալ ոսկին պաշտօն, և խիստ զօրաւոր պաշտօն ունի եղեր, լաւ, նիւթական հանդստութեամբ, մտային պաշար դիպելու համար, զրամ պիտի շահիմ, բայց շահելիքս ապահովելու միջոցներ կ'փնտռեմ։։ Բռնութեան կ'ըսէ. Ես յարդ կարծէի թէ յաղթեալն անիրաւ է և քեզի զլուխ կը ծռէի. արդ՝ կ'դիտեմ որ քանի ապտակ ուտեմ այնքան զլուխս կ'հեծնես, լա՛ւ, ես ալ պիտի ապտակեմ, սակայն դեռ ձեռքերս տկար և դողդոջեն, քիչ մը զօրանալու սէտք ունիմ։ Կառավարութեան կ'ըսէ.

Դու մինչև այսօր ինձի օրօր ըսիր և խոստումներով քնացուցիր. հիմակ աչքս կէս մը բացի և տեսայ որ իրաւունց հաւասարութիւն ըսածդ ծուղակ մ'է, Եւրոպայի դահլիճներու աչքին նեստուած փոշի մ'է. այսուհետև չեմ խաբուիր, կ'ուզեմ ձեռքս շօշափել այդ իրաւունքն, որ տակաւին մնացեր են, կ'ուզեմ դիտնալ թէ ինչ արժէք ունիմ քու աչքիդ առջև։ Ես քուկդ եմ, դու իմն, պէտք է որ իրաւունց հաւասարապէս մասնակից լինինք, բաւական ոսկը կրծեցի, սեղանիդ փշրունքը բաւական ատեն կերայ, հիմակ մենդարար կերակուր կ'ուզեմ, բայց կ'մտածեմ թէ ինչ միջոցաւ այդ կերակուրը կրնամ ձեռք ձգել . . . ։

Եւ մինչդեռ այս նպատակին հասնելու մտօք՝ անհատներ ասպիս անդին դարմաններ կ'փնտռեն, անձանձիր փանոսեան մը 'ի Գէներ դիշերօթիկ դպրոց մը կ'կանգնէ, և խօսքը գործի կ'փոխուրէ, Սամաթիա՝ շնորհիւ բարեյիշատակ Գասպար աղայի՝ իր նորաշէն վարժարանը խնդութեամբ կ'բարեւէ, Ամիրխանեանց՝ պահ մը սանդրէր լեզուն մէկդի թողլով, ուսումնարան մը բանալու հեռամուտ կ'գտնուի, Անձնուէր օգտաշատ ընկերութեան ճիւղերը գաւառաց մէջ օր ըստ օրէ կ'տարածուին, մինչդեռ նոր նոր դպրոցներ կ'բացուին, ինչպէս Յեւդոկիա, Մարաշ, և ընթերցատուններ կ'հաստատուին, ինչպէս Պալըքքէսէր, ՅՕրտու, լրագիրներ յառաջադիմութեան և զեղծումներու բարձման համար զանազան առաջարկութիւններ կ'ընեն, և ահա Ընդհանուր ժողովդ, ձուկը գլխէն բռնելու պէս, զինուորագրութեան խնդիր մը կ'բանայ, հարստահարութեանց յանձնաժողովին տեղեկագրին վրայ, իբր զի, եթէ Հայը զինուոր լինի, իրաւունց պակը գլուխը պիտի դնէ, թէև դու, Հայ զինուորին բերնով, այս մասին տարբեր կ'մտածես, և Ընդհ. ժողովն ալ ձուկը ձեռքէն կ'փախցնէ . . . ։ Դու նէ փերհիզ՝ նէ լահանս թուրշուտս ։

Եթէ ընդհանուր ժողովն իր յանձնակմբին՝ զինուորատուութեան խնդրէն դուրս՝ մէջ բերած դարմանները գործադրել տալու յաջողի, արդէն բաւական մեծ ծառայութիւն մ'ըրած կ'լինի, փոխանակ ը-ը-ը ոանդին մէջ թեթեը-, ինչպէս ուրիշ առթիւ ըսաւ երեսփոխան մը։ Հայն արդէն պարտաւորութիւններով ճնշուած է, և ասոնց փոխարէն վայելած իրաւունքները համեմատաբար քիչ են, ինչ հարկ կայ ուրեմն նոր և ծանր բեռ մը դնել անոր կռնակը, բեռ մը զոր տէրութիւնը դեռ մեզի չյանձներ։ Պիտի ըսես թերևս՝ որ Մասիսի սոր-ին չափ քաջ չեմ, և ոչ Արարատայ պէս բարձր՝ որոնք զինուորութեան ներքոյ կ'կենան, և իրաւունք ունիս. վասն զի այս դարուս մէջ՝ առանց ներքին համոզման՝ պատերազմի դացող զինուոր մը՝ ըստ իս՝ միշտ ՎԱՏ է, թէև նոյն ինքն Հերակլէս լինի։ Թող համոզէն որ ֆանատ . . .

. . . . . .

ՇԱՀՆՈՒՐ

ԳՐԱԿԱՆ

ԵՐԲ ՊԻՏԻ ՇԻՆԵՆՔ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Հանդիսիս Յդ թուոյն մէջ մեր արդի գրական լեզուին անհեթեթ և ճիաստաբեր ուղղութիւնը նշանակելով՝ առաջարկեր էինք ձեռնհաս անձերէ յանձնակումբ մը կազմել, որ պաշտօն ունենայ ԷրեկանոՒՐԼՔ և ՔԱԹԱԲԱՆ մը յօրինել, նոյնպէս խոստացեր էինք նորէն այս խնդրոյս դառնալ։

Ոմանք կ՚յանդիմանեն մեզ որ մեր խոստումը ցարդ չպահեցինք և կարծեն թէ զայն մոռցեր ենք։ Եթէ հնարին է մոռնալ որ մարդ ձեռք ունի՝ թէև այն ձեռնատ, աչք ունի՝ թէև շիլ, ոտք ունի՝ թէև հաշմատ, մենք ալ կրնայինք մոռնալ որ լեզու մ՚ունինք որ կակաղէ։ Ուստի մեր լռութիւնն այս մասին մոռացման արդիւնք չէ, այլ վհատութեան։ Մեզի պէս քանիներ հաղար անգամ՚ըսին և գրեցին թէ ամէն յառաջադիմութեան գործի՝ անհրաժեշտ գործի լեզուն է, թէ մեր արդի գրական հայերէնն ոչ միայն թերի, խակ, անիմաստ, այլև բազմաձգի լինելով՝ շատերուն անխմանալի է, հետևապէս պէտք է աշխարհիկ գրաւոր լեզուին միութիւն մը տալ, որպէս զի ամէն ուսումնական հիգեր արդիւնաւորին։ Բայց ինչ օգուտ, անընելի կ՚մնան այս ձայներն ու գանգատները, վասն զի մեծ մեծ ջարդելու, ճառեր հիւսելու, փառք ստանալու առիթ չընծայեր այս նիւթն, և շատ չոր ու ցամաք կ՚երևի. վասն զի շատ անգամ անմիջական պիտոյքը մոռնալ և երկրորդական իրերու ետևէն վազելու սովոր ենք, վասն զի ապագան ներկայէն զոհել կ՚ախորժինք, և աստղագէտ գիտունին պէս փոս ընկնելէն ետև կ՚հարցնենք իրարու զարմանօք թէ ինչու համար մեր բոլոր վաստակին չպատասխաներ արդիւնքը . . . .

Այս ընթացքով երբէք հայերն իրարու միտք չպիտի իմանան, երբէք մտաւորական միութեան՝ որ գործնականին հիմն է, չպիտի տիրանան, գրիչները սանձարձակ անիշխանութեան մէջ պիտի յարատևեն, լեզուն օր ըստ օրէ պիտի աղաւաղի, ամէն վարժարան, ամէն դասագիր հայ անուամբ տարբեր տարբեր լեզուներ պիտի աւանդեն ապագայ սերնդին և հոսկ ուրեմն յառաջադիմութեան ամենէն կարճ և կորուկ ճանբան ընդունայն պիտի որոնեն։

Եւ սակայն՝ միթէ գժուարին է այս ցաւալի կացութեան դարման մը մտածել, միթէ քանի մը գլուխներ ալ չկան որ այս մասին միանան, և գէթ փորձ մ՚ընելու ելնեն։ Ըստ մեզ շատ դիւրին է, բաւական է որ ամէն հայ լրագիր զայն օրուան խնդիր ընէ, անդադար այս մասին

դրէ, անոր կարևորութիւնը ղղայնէ և հասարակաց կարծիքն առաջադրեալ նպատակին յորդորէ։

Կ'փափաքէինք տեսնել Ազգային կրթական խորհրդոյ տեղեկագրին մէջ երկարաղոյն տեսութիւն մը այս լեզու-ի դոնեան խնդրոյն վրայ։ Կրթական խորհուրդն իր տեսութիւնները մի միայն Թուրքիոյ, կամ լաւ ևս, Պ. Պոլսոյ աշխարհիկ բարբառին մշակութեան խնդրոյն վրայ ամփոփելով կ'ըսէ.

«Լեզուն ազգի մը կրթութեան և զարգացման առաջին գործիքն է, որով ազգի մը անհատները գիտութեանց սկզբունքը սիրտի ընդունին։ Ուստի Հայերէն մաքուր աշխարհիկ լեզուի մը մշակութիւնն ազգային յառաջադիմութեան էական պայմաններէն մէկն է։ Դժբաղդաբար Հայերէն լեզուն օր քան զօր ծաղկելու և մշակուելու տեղ, ինչպէս որ ժամանակիս յառաջադիմութիւնը կը պահանջէ, աղաւաղելու վիճակի մէջ ընկած է։ Ազգային մամուլն ստուգիւ լեզուին բարբառման ըստ բաւականին ծառայեց, բայց մամուլը տարբեր անդամներէ (օրկան) բաղկացած, և իւրաքանչիւր անդամ ըստ քմայ մասնաւոր լեզու մը և մասնաւոր բացատրութիւններ հնարած լինելով լեզուին մէջ փոխանակ մաքրութեան՝ խառնակութիւն և շփոթութիւն մտցուցած է։ Հետևաբար դեռ բոլորովին մշակուած գրական լեզու մը չունինք, և օտար լեզուաց բազմաթիւ ուսումնական և արուեստական բառերու Հայերէն զուգակշիռները գտնուած չեն։

«Ահա այս պատճառներուն համար կարևոր կը տեսնուի Հայկական Ակադէմիա կամ ուսումնական կամաւ մը կազմել ազգիս մէջ գտնուած առաջին կարգի ուսումնական և գրագէտ անձերէ։ Այսպիսի կամաւ մը կրնայ ուսմանց դասագրքեր պատրաստել, ազգային լեզուին մաքրութեան ու միօրինակութեանը հոգ տանիլ, պէտք եղած ուսումնական և արուեստական մասնաւոր բառերն յօրինել, նոր բառերը մը շինել, և այլն, և այլն։ Ազգին մէջ գիտութիւններ տարածելու համար մշակուած լեզու պէտք է, իսկ մշակուած լեզու ունենալու համար պէտք է որ թէ նախակրթական և թէ բարձրագոյն կարգի վարժարանաց մէջ բոլոր գիտութիւններն ալ Հայերէն լեզուով աւանդուին, պէտք է որ մաքուր աշխարհիկ լեզուով գրուած դասագրքեր ունենանք գիտութեանց բոլոր ճիւղերուն համար։»

Շատ գեղեցիկ, բայց ասի կիսադարման մ'է, մինչդեռ մեր նպատակն ոչ միայն Թուրքիոյ, այլ Ռուսիոյ, Հնդկաստանի և ուրիշ ամէն ցաղթական Հայոց լեզուին միութեան կ'պատկանի, մինչդեռ մենք կ'ա-

առաջարկենք ընդհանուր գրական լեզու մը կազմելու միջոցներ խորհիլ և անոր կանոնաւոր, ճշգրիտ ձեւ մը տալ յանձնակմբի մը ձեռօք, որ ինչպէս արդէն ըսեր ենք, չէ թէ հայապէտ և օգտաւոր պատուոյ անդամներ ունենայ, այլ գլխաւոր ամէն հայաբնակ դաւառներէ և վանքերէ գործօն, հմուտ գրագէտներ պարունակէ և պայմանեալ ժամանակի մը մէջ իր պաշտօնն աւարտէ։

Իր առաջին պաշտօնը պիտի լինի քերականութեան մը յօրինումն. երկրորդ՝ բառարանի մը հեղինակութիւնն, որոնք ամէն լեզուներու հիմունքը կ'համարուին։ Սակայն ի՞նչպէս գետեղել այս հիմունքն աշխարհիկ լեզուին համար։ Մեր ձեռնհասութենէ վեր է առաջարկեալ յանձնակմբին հրահանգներ տալ։ Այսչափ միայն կ'ըսենք թէ՝ ա) Ամէն լեզու գիտնական հանրական կանոններ ունենալով՝ անհրաժեշտ է սոյն կանոններն ու սահմանները ճշգրիտ բացատրել։ բ) Բառնալ այն զանազանութիւններն որ այլ և այլ աշխարհիկ բարբառներու տարբեր տարբեր հոլովներէ և խոնարհումներէ կ'ծագին, կարելի եղածին չափ բառերու և բայերու հոլովմունքն ու լծորդութիւնքը փոքրագոյն թիւի վերածելով։ գ) Ի բայ թողուլ այն խորթ, եկամուտ, տղեղ դարձուածներն որ գռնէիկ են և տգիտութեան ծնունդ։ դ) Ընդունիլ գրաբառէն այն ամէն նախդիրները, ձևերն ու բառերն որ կրնան համայն հայոց աւելի գիւրըմբռնելի գործել նոր կանոնաւոր գրական լեզուն։

Իսկ բառարանի մասին մեր դիտողութիւնները նոր չեն։ Հարկ է ա) Առ հասարակ գործածելի ամէն ընտիր, կոկիկ բառերուն յատուկ յատուկ իմաստները ճշգրտել։ բ) Մութ, խրթին, բաղմաբարդ բառեր՝ որ միանակ հին լեզուին կ'պատկանին, նոր բառարանէն մերժել, կամ անոնց գործադրութեան պարագաները նշանակել։ գ) Ամենէն ծաղկած և հարուստ լեզուի բառարանի մը բառերն՝ իրենց ամէն գոյներով՝ բացատրող հայ բառեր փնտռել գտնել հայաբնակ երկիրներու մէջ, և եթէ չկան՝ հնարել։ դ) Բարոյական, իմաստասիրական և ամէն տեսակ գիտութիւններու վերաբերեալ բառեր հին լեզուէն քաղել կամ ընտրողութեամբ յօրինել։ ե) Արարատեան և այլ նահանգներու այն ամէն խօսքերն ու ձևերն, որ՝ թէև մեղի անծանօթ՝ մեծ արժէք ունին իրենց նախնի հարազատութեան, պարզութեան և բանահիւսութեան կողմէ, ընդունիլ, և այլն։

Ասոնք գրելով՝ չկարծուի թէ առաջարկեալ երկու խիստ ծանր ու միանգամայն կարևոր գործերու կատարման համար ամէն բան գրած եղանք։ Ո՛չ. այլ միայն մեր միտքն է յորդորել լրագիրներն որ այս

ենդրոյն վրայ իրենց գիտողութիւնները հասարակութեան չղլանան, որպէս զի, եթէ ոչ մեր, որ արդէն կաղն 'ի կաղ կ'երթանք, գէթ յաջորդ սերնդին գրական լաւագոյն ապագայ մը յարդարելու միջոցները գտնեն։ Եթէ այս նպատակը յաջողութեամբ պսակուի՝ որչափ կ'դիւրանայ ազգային ընդհանուր յառաջադիմութեան գործը։ Նախապէս ամենուրէք կանոնաւոր նոր լեզուաւ դասագիրներ կ'յօրինուին, վարժարաններու աշակերտներ՝ թէ 'ի Թուրքիա, 'ի Ռուսաստան և թէ այլուր, որոշեալ համաձայնութեան ուժով,* նոյն լեզուն սորվելու, խօսելու կ'սկսին փոքր առ փոքր, և երբ աշխարհ եկեն՝ իրենց հեռակայ դասակիցներու հետ արդեամբ բանակցելու դիւրութիւն կ'ունենան։ Իսկ գրականութիւնը թէ նոր և թէ հին գրիչներու ձեռքը միակերպ ուղղութիւն, հետևապէս գիւրիմացութիւն, հարստութիւն, ճշտութիւն կ'ստանայ և այս կերպով համօրէն հայոց մտային պաշարն աւելնալով՝ գործնական աղդաշինութիւնը չուշանար։

ՔԵՐԹՈՒԱԾ

ԱՌ ՔԵԶ ԳԻՐՍԱՍ, ԿԱՐԴԱ՛ ՑՆԾԱՍ

1

Ասա, ով Հայ, ուստի ուսար
Դաւանանել քո ազգին.
Այնինչ խորհուրդ կամ միտք վատթար
Մուացոյց քեզ քո նախնին։

2

Ինչու անտէր մնացել ես,
Ինչու սուրդ ժանգոտած,
Ինչու ձեռքում ազգայ սէս սէս
Մի խաղալիք ես դարձած։

3

Այն կրօնը հաստատ ու ճիշդ,
Որոյ համար սուրբ Հարքը
Արիւն քրտինք թափել են միշտ,
Մինչ զսհել են անձնքերը։

4

Ակն վանեայ պարզ ջրի պէս
Հերձուածներից սրբելով,
Քեզ յանձնել են որ պահպանես
Կեանք նմա բաշխելով։

5

Բայց դու անդութ փոխանակ, որ
Նոյա փառքը հուչակես
Եւ հաւատդ այն դարևոր
Սրտիդ յարիւմ պահես։

6

Զգել ես արդ դու անխնայ
Փոփոխական հողմին տակ
Բայց նրանից էլ ի՞նչ յոյս կայ
Ի՞նչ լաւութեան նշանակ։

* Հանդիպես 3դ թիւին մէջ յանձնակմբին կազմութեան կերպն արդէն նշանակած ենք։

7

Մի՞ օր սաստիկ կ'փչէ նա
Աչքդ փոշով կ'լցնէ
Եւ արմատով յանկարծակի
Կ'խլէ ու կ'տանէ

8

Յետոյ որ աչքդ կ'բանաս
Քեզ զրկած կ'տեսնես
Շատ կ'հեծես, շատ կ'ողբաս ;
Բայց ուշ կ'լինի, ի՞նչ անես ։

9

Այն ժամանակ դիտեմ, որ դու
Չես խնայել զլուխդ
Քարի պատի ես զարնելու
Փետելու ես մազերդ ։

10

Բայց ի՞նչ օգուտ, ի՞նչպէս քո հին
Աղուոյթիւնը պահպանես
Երբոր պատճառ մի արտաքին
Շփոթում է, դերում քեզ ։

11

Ասա այժմ այն ի՞նչ բան է,
Չէ՞, տեսնում եմ, չես կարող,
Քո բերանը պապանձվել է,
Քեզ տիրել է սաստիկ դող ։

12

Բայց աղղային ոգին, սու

,
Առանց քեզ էլ անդադար
Ականջումն է աղաղակում.
«Կաշառ, կաշառն է պատճառ ։»

13

Ի՞նչ եմ տեսնում՝ լուած Հայուն
Լեզուն այս տեղ բացուեցաւ,
Կարծես մի նոր շնորհ վերին,
Թէ նոր ոգի ստացաւ ։

14

Աղշած դէմքին եկաւ դոյն վառ,
Աչքերը չորս բացուեցան
Բայց հարցանես. ինչու համար.
«Կաշառ» բառին լսաւ ձայն ։

15

Ապողոնը իւր քնարից
Այնքան ոգի չէր ստանում,
Որքան Հայը «կաշառ» ձայնից
Արթնացաւ այս միջոցում ։

16

Երբոր, ասաց, լայն ժապաւէն,
Գոյն դոյն խաչեր բազմաթիւ
Բոլոր կուրծքս կ'զարդարեն,
Այն ի՞նչ փառք է, ի՞նչ պատիւ ։

17

Երբոր շամբայն թնդացնում են
Մեծաւորներն ազնիւ
Եւ կենացը իմ ըմպում են,
Ի՞նչ փառք է, ի՞նչ պատիւ ։

18

Չէ՞, Հայ, չուզեմ այժմ
Ոգևորված ես դու, դիտեմ
Բայց ականջքս խլացել են,
Այլ քեզ լսել կարող չեմ ։

19

Առ քո փառքդ, առ պատիւդ
Գնա անցի՛ր խոր խորխորատ,
Առ քո հնչող ոսկիներդ
Մի պլծեր ազգդ ու հաւատդ ։

ՄԱՆՈՒԿ ՍԱԴԱԹԵԱՆՑ

ՊԱՏՄԱԿԱՆ

—

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ

Ղ. Հիւկօ՝ որ ստէպ ապագայ քան ներկայ սերնդին կ'գրէ ու կ'խօսի, անպամ մ'այն գիւղականաց (ruraux) մէջ՝ որ Ֆրանսայի աղգային ժողով կ'կոչուի, և ուր իրեն արժանի ամբոխ մը չգտնելուն հրաժեշտ տուաւ, կ'գոչէր զայրագին այս կոպտաձեւերս և հանրական ժողովներս դիմադակ պարէս և իրաւ մարդկութեան խղճին թարգման կ'կանգնէր։ Ղատն ալ մէկ կողմէ էրոՔ իրաւանց գիտութիւնը կ'այրէր կ'ամպոտէր, միւս կողմէ անսխալականութիւնը հոգիներն 'ի սպառ կ'խորտակէր և ղՊապ Աստուած կ'հրատարակէր։ Բոլոր աշխարհ արհաւրաք լսեց այս աստուածընդդէմ սկզբունքն՝ որ պապական բռնապետութեան պսակն է, և կառավարութիւններն անոր առջև ամբարտաւներ կանգնեցին որպէս զի իրենց ընկերական և քաղաքական կեանքը չխանգարէ։ Կրօնասէր սիրտեր, Ճարտասան բերաններ որոտացին ոչ միայն Նոր աստուածոյ դէմ, այլև անոր դրաւած առաքելական նախապատիւութեան պաշտօնն իսկ վէճի տակ դրին։ Այն ատեն Հ. Հիասէնդ, Տօլինկէր, և ուրիշ շատ կրօնականներ յեղափոխութեան դրոշակ պարզեցին և կաթոլիկ ժողովրդոց սիրտերն, որ դարաւոր ստրկութեան և կուրութեան մէջ ապշեր թմրեր էին, դղրդելու և հին քրիստոնէական դարերը վերանորոգելու աշխատեցան։ Այս շարժումն՝ որ տակաւին կ'շարունակուի՝ թէև թուլապէս, ծանր ծանր հետևանք պիտի ունենայ առ ապայս և Պապին հոգևոր իշխանութեան իսկ վերջին հարուածը պիտի տայ։ Սակայն լինչպէս քակել այն շղթաներն՝ որոյ վարժեր են ժէղվիներու ձեռքը տոգորուած ժողովուրդներն, լինչպէս համոզել որ պապական կղերն ոչ միայն բոլորովին հեռացած է հին քրիստոնէութենէն, այլև լուսոյ թշնամի է, և ազգերը հոգւոյ սպանդարանը կ'առաջնորդէ։

Իրաւ է որ անսխալականութեան վարդապետութեան վրայ՝ Աստուծի՝ պապական իշխանութեան հետ կնքած հին պաշտաւորութիւնն (concordat) աւրեց, իրաւ է որ Ֆրանսա՝ Կալլիգան եկեղեցւոյ արտ-

ուծնութիւնները ձեռք ձգելու պիտի աշխատի, Գերմանիոյ մէջ հիմնելով մը վերահաստատելու կ'ձգտին, հռոմէական հայերը՝ Հասունեանի իրաւասութիւնը կ'մերժեն՝ և Հայաստանեայց եկեղեցւոյ աւանդութեանց և ծիսից փարելու կ'ձգտին անվեհեր, հուսկ ուրեմն՝ կաթոլիկ աշխարհին մէջ՝ եթէ ոչ ազգային եկեղեցեաց սկզբունքը, գէթ առ այժմ խիզձերը ճշմարիտ լուսով վերանորոգելու փորձեր կ'լինին, և սակայն ճշմարտասէր աստուածաբաններ այս նպաստաւոր նշանները բաւական չեն համարիր, և շատ անգամ՝ կարօտագին կ'դիտեն Արևելեան եկեղեցեաց հինաւանդ անկախ դրութիւնն, և անտարակոյս ևս քան զևս պիտի հիանան եթէ 'ի մօտուստ տեսնեն Հայաստանեայց եկեղեցւոյ նախնական ոգին, պարզութիւնը, սահմանադրութիւնը, թէև տեղ տեղ անոր մէջ զեղծումներ սպրդած են տգիտութեան կամ բռնութեան ձեռքէ։ Բայց դարձեալ կ'պտնին այնպիսի օտար կրօնամոլներ որ մեզ հերետիկոս, արիոսեան, մանիքեյի, մինչև կռապաշտ կ'անուանեն։ «Եւ միթէ ասոնք այն անդրալեռնականները չէ՞ն, ինչպէս կ'ըսէ Հ. Հիասէնդ, որ Աստուծոյ և հոգւոյ խնդիրներու մէջ աշխարհական իշխանութեան միջամտութիւնն իբրև հաստատ դատանութիւն հաստատելու կ'ձգտին։ Միթէ ասոնք չէ՞ն 1864ի «ինչլոպէ»ը (կոնդակ) և Աստրիոյ հետ դաշնադրութիւնը շինողները, միթէ ասոնք չէ՞ն, որ աշխարհիս ամէն կողմը կ'պտրտին՝ որպէս զի ասոնց մէկ խաւարին անկիւնը՝ բաւական կայր կամ՝ վատ կառավարութիւն կամ ժողովուրդ մը գտնեն նախ՝ իբրև դատակից ծառայեցնելու և ապա զնչ ընելու համար։»

Անհնար է որ՝ ինչպէս էին երբեմն բոլոր քրիստոնէական եկեղեցիներ, քաղաքական կառավարութիւններն ևս սահմանադրական դառնալով՝ պապական իշխանութեան նոյն իսկ հոգևոր ազդեցութիւնն աւելի յարատևէ։ Ժողովրդոյ լուսաւոր խիզձն ու ազատութիւնը պիտի քանդէ անշուշտ Պապին հոգևոր բռնակալութիւնն, ինչպէս Սէտան քանդեց իր աշխարհական զօրութիւնը։ Հռոմ՝ որ փոփոխակի կայսրերու ձեռքի, վեհապետ ու իրաւարար դարձաւ երբեմն, օր մը պարզ առաջնորդ եպիսկոպոս մը պիտի ունենայ և մինչև ցդ դար ունեցած վիճակին պիտի դառնայ։ Եկեղեցւոյ արդի կայութիւնը նախկինին հետ համեմատելու համար՝ արժան դատեցինք Ֆ. Վէյոլէրի ընդհանուր պատմութենէն հետևեալ հատուածը մէջ բերել։

«Ի սկզբան քրիստոնէից հաղորդութիւնները (միաբանութիւն), որոց հաղորդ կ'լինէին մարդիկ սիրատութեամբ, եղբայրական սիրոյ և

ժողովուածոյ հաւասարութեան վրայ հիմնեալ ժողովրդապետական (démocratique) ուղղութիւն ունէին։ Ամէն ոք Աստուծոյ շնորհած պարգևներով իր միաբանութեան կ'ծառայէր։ Երէցոնք (presbyteri) որ նաև Եպիսկոպոսունք կ'անուանէին և պաշտօն ունէին բարոյականութեան և արտաքին գործոյ տնօրէնութեան և վարչութեան հսկել, հաւատացելոց լրութենէ կ'ընտրուէին, նոյնպէս և սարկաւագունք (խնամակալ աղքատաց) գոյից տնտեսութեան հոգը կ'տանէին։ Առաջ յատուկ քահանաներ չկային, ամէնքը գործոն անդամներ էին եկեղեցւոյ ժողովներու մէջ՝ ուր փոփոխակի աղօթք, շարական, սուրբ գիրք կ'կարդային, հոգևոր բանակցութիւններ կ'ընէին, որոնք տէրունական ընթերցիքով և ողորմասիրական Ճաշերով (աղապ) կ'աւարտէին, թէև վերջէն այս գործողութիւններն իրարմէ զատեցին։ Անարժանները կամ նեղվեալները՝ մի միայն ապաշաւելէն ետև՝ կարող էին աբջակոմ ստանալ և «սրբոյ հաղորդութեան» մէջ մուտ ունենալ։ Առաքելոց մահուանէ ետքն՝ այն երիցունք՝ որ անուն և արժանիք ունէին՝ երիցանց նախագահ կարգեցան, և եպիսկոպոսի դէտ) անունն առնուլ նախադաս սեպեցին, վասն զի դաւանութիւնն անարատ պահելու պաշտօն ունէին։ Շատ չանցաւ՝ նոյնպէս կրօնական բարեկարգութեան պահպանութեան գործը կամ հոգևոր իրաւասութիւնը, դատական պարզ քննութենէ մինչև բանադրութեան իրաւունքն իրենց ձեռքն անցաւ։ Առանձին միաբանութիւններն ընդ երկար արտաքին յարակցութիւն չունեցան, ըստ որում՝ նոյն հաւատն և նոյն սէրը միայն մեծ հասարակութեան բոլոր անդամները կ'զոդէին։

Երբ քրիստոնէութիւնն ևս քան զևս տարածուեցաւ, եղբայրական հաւասարութիւնը փոքր առ փոքր անհետ եղաւ, վասն զի եկեղեցւոյ ազատաւորներն՝ աշխարհականաց մօտ՝ ընտրելագոյն դաս մը (կղեր) կը համարէին ինքզինքնին և երախայրիք, տասանորդ և ուրիշ պարգևներ կ'պահանջէին, իբրև բռնի տուրք, մինչդեռ առաջ կամաւոր էին։ Սակայն դիզակնաք դեռ ևս պահեցին եպիսկոպոսներ, քահանաներ և տարկաւագներ ընտրելու իրաւունքը՝ մինչև երրորդ դարուն վերջն։ Եպիսկոպոսական իշխանութիւնը քանի աւելնար, նոյնչափ կղերը՝ հոգևոր նուիրագործութեամբ (ձեռնադրութեամբ) զանազանուելով, ժողովուրդէն կ'զատուէր, մինչև որ՝ ի վերջ՝ քահանաներն ու եպիսկոպոսներն եպիսկոպոսաց կողմէն կարգեցան՝ իբրև յաջորդ Առաքելոց, և դիզակնակ կղերը՝ քաղքին եպիսկոպոսին և թեմի մեծաւորին առջև՝ ստորնագոյն վիճակի մէջ ընկաւ, ինչպէս նաև առաջնորդը մայրաքաղ-

քի եպիսկոպոսին առջև՝ որ մետրոպոլիտ կամ՝ արքեպիսկոպոս կ'կոչուէր։ Մետրոպոլիտ եպիսկոպոսներու մէջ՝ Անտիոքի, Ալէքսանդրիոյ, Հռոմի, նոյնպէս Կ. Պոլսոյ, Երուսաղէմի, Եփեսոսի եպիսկոպոսներն և ուրիշ ապոստոլական աթոռներ (հարկաւ Հայաստանինն ալ) մեծ համբաւ ունէին, ոչ միայն այն քաղաքներու բարձր դրից, այլև իրենց եկեղեցեաց հնութեան պատճառաւ։ Ասոնք պարբերաբար կ'կոչուէին, և քիչ քիչ միւս եպիսկոպոսները ձեռնադրելու իրաւունքը ստացան։ Այս բաժանումը վերին և ստորին կղերի մէջ, ու պինոպնէրու կալուածքներուն, ուր մետրոպոլիտներ իրենց ազգակից եպիսկոպոսներով՝ եկեղեցւոյ գործերու մասին որոշումներ կ'ընէին, որ յետոյ կայսեր հաւանութեամբ օրինաց ոյժ կ'առնուին, եկեղեցւոյ նախնի պարզութիւնը հիմնովին այլայլեցին և անոր ազնուապետական կառավարութեան ձև մը տուին։ Ասով ժողովուրդն իր իշխանութիւնը լիովին կորցոյց, և ասոր փոխարէն՝ բարձրագիր մարդիկ՝ որ պատուոյ և փառաց տենչ ունէին, քրիստոնէութեան ծոցը զարձան, և առաջ եղբայրական հաւասարութեան նպաստաւոր չէին երևեր։ Այսպէս՝ եկեղեցին՝ առ հասարակ հաւատացելոց մէջ՝ իր էական հիմը կորցոյց, անկից զատուելու անորմէ բարձր ելաւ իբրև կղերական և եպիսկոպոսական հիմնարկութիւն մ'որ կ'պնդեր թէ ինքն միայն իրաւունք ունի փրկութիւն շնորհել, բաշխել կամ մերժել՝ եթէ հնազանդութիւն գտնէր թէ ոչ, ինքն իր վարդապետութեամբ կ'հաստատեր դաւանանքը, կենաց և պաշտաման կանոններն, ինքը կ'ստանձնէր Քրիստոսի Աւետարանը բացատրելու և պաշտպանելու գործն, ինքը կ'վճռեր և կ'հալածէր՝ իրեն հերետիկոս՝ իր վարդապետութեանց հակառակողներն, և դատուած հերետիկոսներէն հալածանաց վրէժ լուծելու կ'ելնէր։»

Այս պատկերէն ակն յայտնի կ'երևի թէ ինչպէս կղերը՝ մանաւանդ պապական կղերը՝ ժողովուրդէն զատ մարմին մը կազմելով՝ անոր ոչ միայն մաքին և հոգւոյն վրայ բռնապէս տիրեց՝ այլև մարմինն ալ կաշկանդեց, ոչ միայն խաչ՝ այլ սուր գործածեց, ոչ միայն շանթեր՝ այլ արիւնահեղ պատերազմներ արձակեց գրգռեց, ոչ միայն թագաւորներու կռնակն իր ոտից պատուանդան ըրաւ՝ այլև ժողովուրդներ խմբովին բռնադրեց, արգիլեց, թագաւորութիւններ և արքայութիւն ըստ հաճոյս բաշխեց։ Իսկ մեր օրերը՝ տեսնելով որ Լուսեր իր մէկ թևը կորցոյց, Իտալիա իր ոտքը խորտակեց, օրհասական զայրոյթով անսխալականութիւնը գրկեց, ինչպէս կ'գրկէ մոլեգինը դիակ մը։ . . . . . .

ԹԱՂԱԹԱԿԱՆ

Ամէն անգամուն որ ժողովի մը բացման առթիւ՝ թագուհի, թագաւոր, կայսր, նախագահ մը կ'հրատարակեն թէ աշխարհս խաղաղութիւնն անվրդով պահելու պիտի ջանան՝ մարդ կ'յորդորուի յիշելու այն հովիւն որ այնքան կ'խաբէ թէ գայլն իր ոչխարները կ'փարատէ որ այնուհետև ոչ ոք իրեն կ'հաւատայ։ Փափաքելի էր արդարև որ իշխանները իրենց խօսքին տերը լինէին և ամէն գիւական կամ դիւանագիտական խնդիր հաշտարար բանակցութեամբ լուծէին, սակայն դժբաղդաբար այս տեսակ մարդասիրական ցոյցեր ժողովրդոց շահերուն հետ շուտով կ'մոռցուին՝ երբ փառամոլութիւնն ու աշխարհակալութեան տենչը բարձր կ'խօսին՝ և արեան հեղեղներ թափել կ'տան։ Բայց միթէ ժողովուրդներն ալ ստէպ թագաւորներու կրից չէ՞ն աջակցիր, միթէ ստէպ իրենց ձեռք ձգած խաղաղութեան երաշխաւորութեանց մէջ դերագոյնն, այս է ազատութիւն, կուսակցութեանց գաւերու մէջ չէ՞ն թաղեր։ Թող Ֆրանսա՝ որ միապետութեան և հասարակապետութեան մէջ կ'տարուբերի, այն Ֆրանսան որ արիւնալի դասերէ ետև՝ հարկ էր որ զգաստանար և իր բաւարարութիւն իսկ կայսեր, թագաւորի, իշխանի անուններն 'ի սպառ սրբէր, այսօր ՍՊԱՆԻԱ կ'յուզուի, զանազան կուսակցութեանց մէջ կ'մրցի և իր երկրին կենսական շահերն առ ոչ մինչ գրելով՝ օտար թագ մը կ'շոյէ, մինչդեռ առանց մը ազատ էր մինչ իր բազդին տէր լինիլ և հասարակապետութիւն հաստատել։ Այս դրութեան մէջ է փրկութիւնն, և մինչև որ Եւրոպայի ազգերն այս ճշմարտութիւնը չըմբռնեն և գործադրել չսորվին, հնարին չէ յուսալ յարատև խաղաղութեան։ Եւ ի՞նչ կ'ուզէ Սպանիա, որուն ազգային ժողովը (քորդէզ) անժամանակ կ'ցրուի, և ժողովականները ողջայաբար Կեցցէ՛ հասարակապետութիւն կ'գոչեն՝ իրարմէ բաժնուելով։ Ի՞նչ կրնայ ընել երբ իր ազատական երեսփոխաններն իսկ իրարու հետ անհաշտ են։ Զօրիլլա հանրապետական, Սակրստա աղապաղէր՝ իրարու սուր կ'քաշեն։ Ժողովին մէջ՝ այս՝ Էնդէրնասիոնալ ընկերութիւնը բառնալու կ'առաջարկէ, այն՝ քանի մը վանական ուխտեր քակելու համար եղած որոշման գործադրութիւնը կ'պահանջէ, և մինչդեռ

պաշտօնեաներն այս կուսին մէջ իրենց անկումը կ'դիտեն՝ Ալքամբօ՝ պաշտօնէից նախագահը՝ ժողովը կ'դադարէ, և ապա պաշտօնէութիւնն ալ կ'հրաժարի։ Ամէնէ թաղաւորն՝ որ ախորժելի վիճակի մէջ չէ, կ'յաջողի ուր ուրեմն Սակասդայի ձեռօք նոր պաշտօնէութիւն մը կարկտել, սակայն տարակոյս չկայ որ ստէպ ԻՏԱԼԻՈՅ պայծառ երկինքից կ'կարօտի՝ մանաւանդ հիմակ որ Հռոմ՝ իր հայրենեաց մայրաքաղաքը դարձաւ։ Վիկդօր-Էմմանուէլ խաղաղասէր Բարլմէնդն առաջին անգամ յատիտենական քաղքին մէջ կ'բանայ և իր ճառով մէկ կողմէ խաղաղութիւն կ'քարոզէ և միւս կողմէ ցամաքային ու ծովային զօրութիւնն աւելցնել անհրաժեշտ կ'սեպէ։ Իսկ Ս. Պասլը՝ բնիկ և օտար եպիսկոպոսներ պաշտօնի կարգելու առթիւ՝ կարգինալայ ժողովին մէջ՝ ըստ սովորութեան նզովելով կ'նզովէ թէ անսխալականութեան թշնամիներն և թէ ասոնց պաշտպան վեհապետները։

ՖՐԱՆՍԱՅԻ ազգային ժողովը կ'բացուի. Պ. Թիէր երկար պատգամաղիր մը կ'կարդայ որով երկրին տնտեսական, դրամական և զինուորական վիճակին վրայ մանրամասն տեղեկութիւններ կ'հաղորդէ իր սովորական, պարզ, ճշդիւ և հրապուրիչ ոճով։ Կ'յայտնէ թէ՝ Ֆրանսա օտար տէրութեանց հետ բարեկամ է, և իր կողմէն խաղաղութիւնն անվրդով պահելու քաղաքականութեան պիտի հետևի, թէ երկրին նիւթական վիճակը բարելաւելու վրայ է, ժամանակը նոր նոր բարեկարգութիւններ պիտի բերէ, թէ Գերմանիոյ հետ եղած դաշնադրութիւնները կնքուեր են, թէ Ֆրանսա մեծ ելեմուտներ կրեր է առևտրական դաշնէրէն և Անգլիոյ հետ այս մասին եղածը փետրվար ամսուն պիտի դադրեցնէ, թէ կայսրութեան օրով պիտի ժէն 2,200 միլիոն էր 200 հազար զօրքով՝ որ 700 հազար զօրաց դէմ պիտի կենային, թէ այժմ 2,242 միլիոն է իրաւ, սակայն 400 հազար հոգիէ բաղկացեալ բանակ մը պիտի կազմուի։ Սակայն նախագահին այս պատգամաղիրն՝ ոչ սահմանադրութեան, ոչ ազգային կրթութեան և ոչ ժողովին 'ի Բարիզ վերադարձի մասին բան մը չխօսիր և կասկածոտներուն անվստահութիւն կ'ազդէ։ Ազատասէր կողմը զայն երկդիմի կ'դնէ, իսկ միապետականներուն աքանչելի կ'երևի։ Այս իրաւ է որ Պ. Թիէր ժողովին մեծամասնութենէ կ'երկնչի, զանի կ'դդուէ, վեհապէս կ'կոչէ, և ինչպէս կ'ըսէ լրագիր մը՝ անոր գերլը չընդունիր, այլ ոտքն, և կարծես թէ շնորհ կ'խնդրէ։ Ժուանվիլ իշխանն ու Օմալ դուքսն՝ որ Պ. Թիէրի խօսք տուեր էին ժողովին հներկայանալ, իրենց խօսքն ետ կ'առնուն և իրենց երեսփոխանական ատոռը կ'նստին, սա պատճառաւ որ

այժմ՝ հասարակապետութիւնն իր նախագահն ունենալով՝ իբրև քաղաքացի որ և է միապետական խորհուրդներէ զերծ կ'համարուին։ Ժողովը կ'որոշէ նաև թագին անդամանդները ծախել, որոնք՝ ըստ Ժ. Քլարէդիի՝ ականատի մէջ դրուած ճարպ են և իշխաններ կ'հրապուրեն։ Սակայն դարձեալ այն գոհարներն որ արհեստական և պատմական արժէք մ'ունին՝ պիտի պահուին, այսինքն որոշումը չպիտի գործադրուի։ Արդի Գրանսան չպիտի բուժի երբէք թագաւորասէր հակումներէ և թերևս Պ. Թիէր նոր սերնդի մը դալստեան կ'սպասէ որպէս զի հասարակապետութիւնն անխախտ հիման վրայ հաստատէ։ Իսկ ԱՆՆԼԻՈՑ ժողովուրդն անձկանաք կ'սպասէ զահաժառանգ իշխանին բժշկութեան, մինչդեռ Պիրմինկէմի շարժումն օր ըստ օրէ կ'աւելնայ և լորտերու խորհրդարանի կազմակերպութիւնը փոփոխելու մասնաւոր որոշումներ կ'լինին։ Մինչդեռ Պ. Թիէր իր պատգամաւորը կ'կարդար՝ Պ. Պիսմարգ ԳԵՐՄԱՆԻՈՑ դեսպանին դիր մ'ուղղելով՝ ծանրապէս կ'դանդատի Բարիզի և Մըլէօնի դատաւորներէն՝ որ անպարտ հրատարակեր էին քանի մը գերմանացի գիւղորներ սպանող գաղղիացիները։ Պ. Պիսմարգի այս դիրն՝ որ տեսակ մը պատերազմի յայտարարութիւն է՝ նմանի, կ'ըսէ որ՝ եթէ Գրանսայի կառավարութիւնը մարդասպաններն իրենց ձեռնյանձնելու մերժէ, գերմանացիք պիտի ստիպուին գաղղիացի պատանդներ առնուլ, և 'ի հարկին աւելի բուռն միջոցներ գործածել. և ապա ծանրապէս կ'դատապարտէ այն վրէժխնդրութեան ոգին՝ որ ամէն իրաւունց զգացումը կ'խեղդէ և երկու ազգաց մէջ սասելութեան որոմներ կ'ցանէ։ Օրէնսդրութեան ամէն ճիգերու միօրինակութիւն հաստատելու փորձերն ընդդիմութեան կ'հանդիպին և ասով Գերմանիոյ կատարեալ միութեան գործը յամր կ'քալէ։ ԱՒՍՏՐԻՈՑ դաշտական խորհրդոց ընտրութեան արդիւնքն՝ ըստ մեծի մասին՝ աղատական և արդի պաշտօնէից նպաստաւոր կ'երևին։ Հետևապէս կառավարութիւնը կ'յուսայ զօրանալ գումարուելիք ընդհանուր ժողովոյ (Բէյշրաթ) սահմանադրասէր երեսփոխաններու վրայ յենլով։ Իսկ ՌՈՒՍԱՑ Կայսրը Ս. Գէորգի կարգին տարեդարձի տօնախմբութեան առթիւ՝ Գերմանիոյ Կայսեր կենաց բաժակ առաջարկելով՝ յոյս յայտնեց թէ երկու տէրութեանց մէջ 'ի վաղուց հետէ տիրած սերտ բարեկամութիւնը յարատև պիտի մնայ, որ Եւրոպայի խաղաղութեան լաւագոյն դրաւականն է։ Երբ քաղաքագէտներն՝ անցեալին փորձէն սթափեալ՝ անդադար վառօդ, թնդանօթ և արիւն կ'երգեն՝ անտարակոյս կ'շփոթին և իրենց մթին հաշիւները կ'խանդարին՝ այս դունակ աւետաբերը

բաժակներու ձայնէն, որ պահ մը հորիզոնին վրայի Նոէ՛ կեռերը կը ցրուեն։

ԹՈՒՐՔԻԱ՝ նոր բարեկարգութեանց շաւղին մէջ կ'յարատեւէ, կաշառակեր պաշտօնեաներ խստիւ կ'պատժուին՝ յօրինակ այլոց, պաշտօնատուններէն անպէտ կամ ապիկար պաշտօնակալներ դուրս կ'ձգուին և տնտեսական մեծ խնայողութիւններ կ'լինին։ Յատուկ հրահանգով դաւառները պտըտելու կ'երթան ՀՐԱՊԷՐՈՂԵՐ (ժուրնալճի), որոց պաշտօնն է ժողովրդոյ դանդատները լսել, դաւառական իշխանութեանց ընթացքը քննել, ամէն դեղծմունք, անիրաւութիւն, հարստահարութիւն իմանալ, և ճշգրիտ յայտագիրներ ուղղել առ Բ. Դուռն։ Այս կարգադրութիւնը սիտի կարենայ բուժել դաւառներն արմատացեալ չարիքը, մենք առայժմ կ'տարակուսինք։ Երբ մեքենայ մը աւեր և ժանգոտ է, միթէ կ'շարժի՞ անոր նկարագիրն ընելովդ։ Արդէն դաւառաց աղէտալի վիճակին՝ եթէ քաջահմուտ անձ մը կայ, նոյն ինքն Բ. Եպարգոս Մահմուտ փաշան է, չտեսած դիտէ թէ շատ տեղ մահմէտականն և քրիստոնեայ ժողովրդոց մէջ ինչ սոսկալի խորութիւններ կան, ինչպէս կ'բաշխուի արդարութիւնն, ինչ ողբմալի վիճակի մէջ կը գտնուին գործաւորներն, իրենց հողերն ու կեանքն, ինչպէս երկրագործութիւնն ու ճարտարութիւնն օր ըստ օրէ կ'ընկնին, առ՝ի չգոյէ այն միջոցներու որ ընկերութեան մ'էութեան և բարօրութեան անհրաժեշտ են։ Ուստի՝ տէրութեան ժողովուրդները կրթել, երկիրն աւազակներէ սրբել, ճանբաներ բանալ, հաղորդակցութիւնը դիւրացնել, 'ի վերջէ ամէն անհատի աշխատութիւնը, կեանքն, իրաւունքն ապահովել՝ միակ միջոցներ են փափաքելի նպատակին հասնելու։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ահռելի ոճիր մը։ Պուրնասպատի կայարանէն քառորդ մը հեռի Պ. Զիպսի դերդաստանին առանձին գիւղական տան մէջ այս օրերս պատահած ոճիրը քաղքիս բոլոր բնակչաց սոսկում, ահ ու զայրոյթ պատճառեց։ Գիշերային՝ հինգ վեց դարատաղջիք՝ որոց երկուքը Պ. Զիպսիի արդէն ճանբուած պարտիզպաններն են եղեր, իր տունը կ'մտնեն՝ իր

գրքին՝ առոյգ ազնիւ պատանի մը, սպանելէն և քանի մը սպասաւոր վիրաւորելէն ետև՝ գինքն ու սիկին Զիսլսին ալ մեռցնելու չափ կ'վիրաւորեն և անխնայ կ'դանակոծեն ինչպէս նաև դուստրը։ Ցեռոյ երկաթեայ մատուկ մ'որուն մէջ ոսկի, գոհար և արծաթեղէն կային, կ'առնուն և խոյս կ'տան։ Տեղոյն հեռաւորութեան պատճառաւ հնարին չլինիր այն սարսարաղդ ընտանիքին օգնութեան հասնիլ։ Հետեւեալ օրը Բ. Վալի փաշային ձեռք առած ազդու միջոցներով եղեռնագործները ձեռք կ'ձգուին և դատաստանն անմիջապէս կ'սկսի։ Բոլոր քաղաքս արդարացի զայրոյթով մը բորբոքած է չարագործաց դէմ և անհնարին վիշտ կ'զգայ Մեծ. Զիսլսի գերդաստանին համար։

Բ. Համնի փաշան անտարակոյս նշանաւոր պատիժ մը պիտի տնօրինէ եղեռնագործներուն դէմ, որոյ աչքին անդին կեանքեր խաղալիկ կ'երևին։ Երանի՛ թէ այսպիսի արիւն և արդարասէր կուսակալներ պակաս չլինէին նաև Հայաստանի գաւառներն՝ ուր գրեթէ ամէն ամիս, ամէն ժամ սոսկալի ոճիրներ կ'գործուին քրդաց, ավշարներու ձեռօք և չէ թէ միայն առներ կ'թալլուին, այլև մարդ գիրկէն աղջիկներ, տղաներ կ'յափշտակուին, և կեանք, պատիւ անդադար վտանգի մէջ կ'դտնուին։ Հեռու ենք մենք այն երկիրներէն և միայն անտարբերութեամբ կ'լսենք եղեռնագործութիւններ՝ որ ուր ուրեմն կ'պատժուին, սակայն մեզնէ քանի մը քայլ անդին տեղի ունեցած դէպքին վրայ մեր զգացած սրտմտութենէն ու վիշտէն՝ թերևս երևակայենք թէ ի՞նչ աղէտներ և ցաւեր կան 'ի Հայաստան որ մեզի անծանօթ են։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՆԴԷՍ (LA REVUE D'ORIENT)

Այս անուամբ Ֆրանսերէն հանդէս մը հրատարակուիլ սկսաւ տարեսոյս սկիզբէն՝ խմբագրութեամբ Պ. Պ. Քալէ և Ռօսի գրաղիտաց։ Այս հանդէսը պիտի գրէ և հասընտիր յօդուածներ պիտի հրատարակէ գրականութեան, գիտութեանց, արհեստից, Ճանաչողութեանց և փիլիսոփայութեան վրայ, և հաւատի ենք որ հետզհետէ խմբագիրներուն գրչին արժանի պիտի դառնայ։ Յաջողութիւն կ'մաղթենք այս նոր թերթին։

Տարեկան գինն է մէկ Օսմանեան ոսկի։

ԻՎԱՆՕԷ

Ճղնաւորն ու ասպետը մէկ երկու անգամ երարու ընելեայն ակնարկ կելէն ետեւ՝ առաջինը հիւղին ներսի կողմը դնաց, զգուշութեամբ նպահուած դուռ մը բացաւ, և դահլիճի մը խորէն; ուր կ'տանէր նոյն մուտքն, սհաղին կարկանդակ մը բերաւ՝ անոր լայնատարած նշանակ մը մէջդնելով։ Այս փարթամ կերակուրն իր հիւրին առջև դրաւ; որ, զայն բանալու համար; իր դաշոյնը դուրս ածելով; առանց ժամանակ կորուսելու նոյն կարկանդակին պարունակութեան տեղեկացաւ։

— Այն բարի պահակն որչափ ատենէ վեր այս տեղ եկած է — հարցուց ասպետը Ճղնաւորին սաստիկ ճաշէն շատ մը պատառներ ետ տրնոք ուտելէն ետև։

— Երկու ամսէ վեր — պատասխանեց սուրբ հայրը շտապու։

— Աստուած վկայ — ըսաւ ասպետն — ամէն բան հրաշալի է քան Ճղնարանիդ մէջ; սուրբ մարդ; վասն զի կրնամ երդնուլ որ այս երկնի հայթայթող այծեամը դեռ շաբթուս մէջ ոտքի վրայ էր։

Ճղնաւորն այս դիտողութեան վրայ շփոթեցաւ; և ասկէ զատ՝ ուշ կերպարան մը կ'ցուցնէր, դիտելով որ իր հիւրն անհնայ կ'ջարդէր կարկանդակին ու կ'լափէր, և այս ալ տեսակ մը պատերազմ էր ուրուն մասնակցելու պարտուակ մը չունէր; քանի որ նախապէս իր ժուժկալութեան վրայ պարծեր էր։

— Ես Պալէստին դացած եմ; հայր սուրբ — ըսաւ ասպետը յանկարծ ինքզինքն առնելով — և կ'յիշեմ որ՝ տաճարը սոլորութիւն ունի այն տեղ իր ընդունած հիւրին մեծարած կերակրին լաւութիւնը ցոյց տալու համար՝ անոր սեղանակից լինիլ։ Երբէք չեմ կասկածիր քեզի պէս բարեպաշտ մարդու մը հիւրասիրութեան վրայ; սակայն շատ ջնորհանարտ պիտի լինիմ քեզի եթէ այս արքեպիսի սոլորութեան հետևիս։

— Քու անհիմն կասկածներդ փարատելու համար; ասենք ասպետ; պիտի հաճիմ; դէթ մի անգամ; իմ կանոնիս շեղիլ — պատասխանեց մենաւորն։ Եւ որովհետև այն ատենը պատառաքաղ չկար, իր մատերովն խօթեց կարկանդակին խորերը։

Մարդավարական սառն ձեւերն անպամ մ'որ վերցան՝ կարծես թէ Ճղնաւորին և հիւրին մէջ մրցում մ'է մնաս ցոյց տալու համար թէ ով աւելի ախորժակ ունի; և թէև հաւանօրէն վերջինն երկար ատեն ծոմ պահեր էր; սակայն Ճղնաւորն այս մասին անորմէ աւելի ճարպիկ բրդաւ։

— Սուրբ հայր — ըսաւ ասպետն երբ իր անօթութիւնը քիչ մ'ան-

ցաւ — դրաւ կ'դնեմ իմ ընտիր երիվարս ոսկիի մը վոխարէն ։ թէ՞ այն բարեսէր անտառի պահակն՝ որուն պարտաւոր ենք այս երէն՝ փոքրիկ տակառ մը Քանարեան գինի , կամ ասոր նման բան մը ձգած է քեզի ։ այս ընտիր կարկանդակին ընկերակից ընելու ։ Ի հարկէ այսպիսի պարագայ մը՝ քեզի պէս արժանաւոր մենաւոր մ'իր յիշատակին մէջ պահելու անվայել կ'համարի , սակայն՝ հաւատի եմ , որ եթէ ծածուկ մառանիդ մէջ անդամ մ'ևս փնտռես , պիտի նայիս որ իմ ենթադրութիւնս անհիմն չպիտի ելնէ ։

Ճգնաւորը ծիծաղ մ'ընելով պատասխանեց , և նորէն մառանին կողմն երթալով՝ կաշիէ տաշտ մը հանեց որ շուրջ վեց լիտր գինի կրնար պարունակել ։ Նոյնպէս արծաթէ շրջանակով եղջիւրէ շինուած երկու մեծ դաւաթներ բերաւ ։ Ճաշը մարսել տալու համար այս պատուական ըմպելին բերելէն ետև՝ կարծես թէ ամէն խղճի խայթ անօգուտ սեպեց , և երկու դաւաթները լցնելով՝ սաքսոնական կերպով ըսաւ ։

— Waës haël , պարոն Դանդաղկոտ ասպետ — և միումիս պարպեց դաւաթը ։

— Drink haël (քու կենացդ) Գօրմէնհըրստի սուրբ մենաւոր — պատասխանեց ասպետն , և նոյն չափով դաւաթը կլլեց ։

— Սուրբ հայր — ըսաւ օտարականն՝ երբ այս առաջին բաժակը կլլեցին — կ'զարմանամ որ քու ջիղերդ և կազմածդ ունեցող , և մանաւանդ քեզի պէս կեր ու խումբնող մարդ մը , յանձն առնու այսպէս միայնակ ապրիլ անապատի մը մէջ ։ Ըստ իս , դու աւելի յարմար ես դղեակ մը կամ ամրոց մը պահպանելու , ամէն օր լաւ ուտելու և խմելու , քան թէ այս տեղ հնդեղէնով և ջրով , և նոյն իսկ պահակի մը ողորմասիրութեամբ կերակրելու ։ Ի վերջ՝ եթէ քու տեղդ լինէի , թագաւորին երէն որսալով՝ թէ սիրում եմ և թէ առատութիւն պիտի դտնէի ։ Այս անտառներուն մէջ՝ շատ հօտեր կան և եթէ սուրբ Տրնսդանի մատրանապետին սեղանին համար նոխաղ մը պակսի՝ ոչ ոք այս բանս պիտի դիտէ ։

— Պարոն Դանդաղկոտ ասպետ — պատասխանեց Ճգնաւորն — այդ խօսքերդ վտանգաւոր են , և խնդրեմ նորէն մի՛ կրկներ ։ Ես Ճշմարիտ Ճգնաւոր եմ , թագաւորիս և օրինաց հնազանդ , և եթէ իմ վեհապետիս երէն դողնամ՝ իրաւամբ բանտ պիտի մտնեմ , իսկ եթէ խաչս գիս չազատէ՝ կախաղան պիտի ելնեմ ։

— Իսկ եթէ ես քու տեղդ լինէի — շարունակեց ասպետը — լուսնկային պիտի պտըտէի , մինչդեռ անդէորա և պահակ իրենց տա-

քուկ անկողիններու մէջ կ'ննջեն, և ատեն ատեն՝ աղօթքս մը մնջելով, պուրակներու մէջ արածական վայրի այծերի հօտերուն նետ մը պիտի նետէի։ Ըսէ ինձ, Ճգնաւոր, արդեօք այսպիսի զուարճալի ժամեր չէ՞ անցներ։

— Դանդաղկոտ բարեկամ — պատասխանեց Ճգնաւորը — դու իմ տանս ամէն բաները տեսար, տեսար նաև ինչ որ արժանի չէր տեսնել այն որ բունի կ'մտնէ բնակարան մը և կ'նստի. սակայն՝ հաւատի ե՛ղիր՝ որ լաւագոյն է Աստուծոյ զրկած բաները վայելել, քան թէ ե՛ղած տեղը փնտռել։ Դաւաթդ բեցուր, զարձեալ բարի առաքեցար կ'ըսեմ քեզի, աղաչելով որ ժպիրհ հարցումներ չընես ինձ որպէս զի չստիպուիմ քեզի փորձով ցոյց տալու որ տունս այդպէս դիւրաւ չէիր կարող մտնել, եթէ միաքս դնէի իրօք քեզի դիմադրել։

— Հաւատս վկայ — ըսաւ ասպետն — որ առաջուանէ առելի հեռաքրքրութիւնս կ'շարժես. քեզի պէս խորհրդաւոր Ճգնաւոր մը բնաւ տեսած չունէի, և մինչեւ ատաջ՝ կ'փափաքիմ լաւ ևս Ճանչել քեզ։ Իսկ սպառնալիքիդ գալով՝ քաջ գիտցիր, սուրբ մարդ, որ դիմացդ կեցող մարդուն արհեստն է վանդ փնտռել և անոր դէմ խիզախել։

— Դանդաղկոտ ասպետ, ահա կենացդ կ'խմեմ — ըսաւ մենաւորը — քու արիութիւնդ շատ կ'յարգեմ, այլ խոհեմութեանդ վրայ խիստ թեթեւ կարծիք մ'ունիմ։ Եթէ հաւատար զինուք ինձի հետ մենամարտիլ կ'ուզես, պատրաստ եմ կամքդ կատարելու. իբրև եղբայր և բարեկամ՝ այնպիսի ապաշխարանք և քաւում պիտի տամ քեզի, որ յուսամ թէ ամբողջ տարի մը հեռաքրքրութեան և դուռոզութեան մեղք չպիտի գործես։

Ասպետը հաւանութիւն ցցուց և խնդրեց որ իր ընտրած զէնքն առնուանէ։

— Չկայ զէնք մը — պատասխանեց մենաւորը — Դալիլայի մկրատներէն և Հայէլի գամերէն սկսեալ՝ մինչև Գոլիաթի դաշոյնն՝ որոնք քեզի հետ ՝ի պայքար գալու պատրաստ չլինիմ։ Բայց եթէ ընտրութիւնն ինձ կ'թողուս, ի՞նչ կարծիք ունիս, ազնիւ բարեկամ, սա խաղալիկներուն վրայ։

Այս ըսելով՝ մենաւորն ուրիշ պահարան մը բացաւ, և գոյգ մը վաղը ու վահան հանեց, որ նոյն ժամանակի գեղջային զինուորաց գործածուկ էին։ Ասպետն՝ որ Ճգնաւորին բոլոր շարժումներն ուշի ուշով կը դիտէր, տեսաւ որ այն պահարանին մէջ երիտ երեք ընտիր աղեղներ, մէկ նետակալ, նոյնպէս ծրար մը փքին և վեց հատ նետերու տրցակ

կայրին։ Իսկ տաւիղը մը և ուրիշ նուագակրօնական երևոյթով առարկաներ ևս աչքին զարկին դարանին մութ խորշին մէջ։

— Հայր սուրբ, խօսք կ'տամ քեզի — ըսաւ ասպետն — անխոհեմ հայրցումներ չուղղել այսր հետև։ Այս պահարանին բաներն իմ ամէն հայրցումներուս կ'պատասխանեն և անանց մէջ կ'տեսնեմ վէնք մը (և նոյն պահուն ծունկի բերելով տաւիղն ասաւ) որով լաւ ևս ունիմ մրցիլ քեզի հետ քան սրով և վահանով։

— Յուսամ, պարոն ասպետ — ըսաւ մենաւորն — որ քեզի այդ դանդաղկոտ տիրոջուն իրաւամբ տուած չեն։ Հաւատալի է որ այդ մասին քու վրադ մեծ կասկածներ ունիմ։ Այլ ասկայն իմ հիւրս ես, և չեմ կամիր՝ կամայդ հակառակ, քու արիութիւնդ փարձել։ Ուստի, նստիր, և բաժակդ լեցուր։ Խմենք, երգենք և զրուխանանք։ Եթէ ցաղօր երգ մը գիտես, երջանիկ պիտի համարիմ ինքզինքս որ քեզի գասկնջականութիւն տուի 'ի Գոքամենհրատ, և պիտի տամ միշտ որչափ որ ցուրբ Տընոդանի մնատրան մէջ պաշտօն վարեմ, և Աստուծոյ կամքը, այս պաշտօնը պիտի վարեմ մինչև որ իմ մեխրադոյն պարեղաս դիրեմ և դալարաւէտ պատանը մ'առնեմ։ Բայց արի, լեց բաժակդ, մինչև դի տաւիղս լարելու համար քիչ մը ժամանակի կարօտ եմ, և ցկայ բան մ'որ այնքան ձայնը շահէ և ականջ սրէ, որքան բաժակ մը լաւ գինի։ Իմ մասիս՝ տաւիղս լարերը հնչելէն առաջ կ'փափաքիմ խաղցուցեալ ատիշը մատերուս ծայրը տեսնել։

ԳԼՈՒԽ ԺԴ

Ընդ երեկոյ անդ՝ յանլուր ճգնարան
Պանձալաս գիրքիս թերթերը բանամ,
Որ զրոյցներ կան շատ սուրբ գործերու
Երկնասուր վարքով լի վկաներու։
Ասկայն երբ իմ մամ կը վառի մութին
Կ'երգեմ՝ քան չեղած՝ տաղս չափագին;
Ո՞վ կենայ 'ի բաց թողուլ պերճ մուշտակ,
Եւ գալ առնուլ ցուպ և դորշ իմ վարշտակ
Ո՞վ պիտի թողու աղմուկ, տեռարան,
Եւ գայ բնակի անդորր ՄԵՆԱՐԱՆ։

ՎԱՐԴՆ

Թէև ասպետը մասդիւր ընդունեց մենաւորին հրաւէրը, ասկայն ան՝ իր տաւիղը լարելու գործը շատ հեշտ չգտաւ։

— Ն'թուի ինձ, սրբակրօն հայր — ըսաւ ասպետն — որ նուագարանիդ լարին մէկը պակաս է, և միւսներն ևս փոքր ինչ խանգարեր են։

— Ա՛հ, ինչպէս քաջ կ'դիտես — պատասխան տուաւ մենեստրոն — այդ գիտողութենէդ սա կ'իմանամ՝ որ այս արհեստին վարժ ես։ Յանցանքն իմն չէ — յարեց նա աչերը վեր ածելով — այլ գինիին և ցոփութեան։ Արդէն ըսեր էի ես Ալան-Տէլ՝ հիւսիսաբնակ նուագածուին՝ որ տաւիղս պիտի աւրէ՝ եթէ եօթներորդ գաւաթը պարպելէն ետև՝ զայն ածելու ձեռք առնու։ Բայց իմ խօսքս մտիկ չըրաւ։ Բարեկամ, այս բաժակը քու երաժշտական ճարտարութեանդ համար պիտի խմեմ։

Այս ըսելով գաւաթը խորին ծանրութեամբ մը պարպեց, նոյն պահուն սկսաւ երաժշտին անժուժկալութեան համար իր դլուխը ցնցելով, մինչդեռ ասպետը՝ տաւիղը շոյելէն ետև՝ կարճ փորձ մ'ըրաւ և ապա մենեստրին հարցուց եթէ sirvente (երգ) մը կ'ընարէ օք (oc) լեզուաւ,* թէ ոչ lai (եղերդ) մը oui լեզուաւ կամ սիրերգ մ'անկլիաբէն դուհիկ ոճով։

— Սիրերգ մը, սիրերգ մը — ըսաւ մենեստրը — զոր Գրանսայի ամէն օտերէն և ոտներէն նախադաս կ'համարիմ։ Ես բացարձակ անկլիացի եմ, աբի ասպետ, և իմ պաշտպան սուրբս, Տընսդան ևս բացարձակ անկլիացի էր, և օտ և ոտ կ'ատէր նա, ինչպէս որ ծաղանին ճիրանին կորձնները կ'ատէր, իմ մենարանիս մէջ կ'ուզեմ որ բացարձակ անկլիարէն երգ երգես։

— Ուրեմն — պատասխանեց ասպետը — փորձ պիտի փորձեմ սիրերգ մը նուագել, յօրինեալ սաքսոն դուսանի մը զոր Յերուսաղէմ ճանչցայ։

Թէպէտև ասպետն երաժշտական արհեստին մէջ կատարուն վարպետ մը չէր, սակայն իսկոյն յայտնի եղաւ որ իր տաղանդն ընտիր դասպատուներու ձեռքի մշակուեր էր. արհեստը դէթ վարժեր էր զինքն սմանքելու իր ձայնին թերութիւններն որ բարձր չէր, և բնապէս կոշտ էր քան անուշ։ Մէկ խօսքով՝ իր ընդարձակ պակսութիւնները պարտակելու համար վարժութեամբ ձեռքէն եկածն ըրեր էր։ Ուստի իր հուագածութիւնը բաւական լաւ պիտի զսնէին ձեռնհաս դատաւորներ իսկ, ուր մնայ ճղնաւորը, մանաւանդ թէ ասպետն իր ձայնարկութեան ժամանակ մերթ վատվատան՝ մերթ ողբալի կ'զեղեղէր, և իր երգած տաղին զօրութիւն և ազդեցութիւն կ'տար։

*Գրանսա՝ Նորման և Ցեւտոնեան ցեղերու մէջ բաժնուած էր, որոնք երկոյզլեզուաւոր բարբառ ունէին. այս է oui կամ oil, զոր հարաւայինք oc կ'արտասանէին, ուստի և Լանկտոք դաւառը։ Նորման ցեղին վիպասանները ֆէոդրէլ, Տեւտոնները դրոՒպպոՒր կ'կոչուէին։

ԽԱՉԱԿՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1

Դարձաւ ասպետ Պաղէստինէն,
Արի զորձեր ըրած անդէն,
Խաչ կրելով՝ վրայ ուսին,
Գոռ ու մարտէն՝ թերմաշ մթին։
Կոփ վահանին՝ ամէն մէկ ուռ
Նշան է մի Ճակատի բուռ.
Իսկ սիրելոյն սանը ներքև
Երպեց նա երբ մարէր արև։

2

Խնդա, աղջիկս, սեռ քու ասպետ,
Գայ 'ի հեռուստ ոսկի երկրէդ.
Զբրերէ ինչք, նա պէտք չունի,
Բայց զէն ու զարդ և ձին մարտի,
Բայց և մարակ յոսոխ վարսել,
Բայց տէգ և սուր՝ տապաստ նետել.
Այս է տրիտուր իմ վաստակիս,
Ասով յուսամ ժպտին թէկլիս։

3

Խնդա, աղջիկ, միշտ եմ հաստատ
Քու կրակով մղեցի մարտ.
Աղնիւ շողուն մէջ ամբոխին
Շմնաս պիտի անտես, ստորին.
Գուսան տ'երպէ, հերոսն ըսէ,
«Տես սա աղջիկ զեղանի է.
«Փալփլուն աչերն են մրցանակ
«Ասկալոնի մեծ յաղթանակ։

4

Տես իր ծիծաղ, սրեց սուրն այն
Որով շատ հարս այրի դարձան,

Երբ ուժաթափ Մահմուդ անհաշտ,
Ընկաւ տապաստ յԻկոնեան դաշտ։
Արևադոյն իր դանդուրներ
Կէս բաց՝ կէս դոց՝ պէս ձեան ուսեր
Կը պահպանեն, և մէն մի թել
Հեթանոսի կեանք է արժել։

5

Խնդա, աղջիկ, անուշս է մութ,
Բայց քաջութեանս գովեստ է քոյդ։
Ո՛հ, բայց հիմիկ, սա դուռ դաժան
Զի ցօղ կը դայ, օր է տարժամ։
Սիրիայի տապով միշտ վառ
Հիւսիսի հով՝ մահ է ինձ սառ.
Սէրդ շնորհպարտ մեղմէ թող ահ
Եւ տայ շնորհ այնմ որ բերէ դահ։

Երբ ասպետը կ'երդէր՝ Ճղնաւորն՝ իբր մեր օրուան նոր թատերախաղի մը քննադատ կ'սեպէր ինքզինքն։ Իր բազմոցին վրայ երկնցած, աչերը կէս գոցեր էր, մերթ ձեռներն իրարու կ'կցէր, բթամատները կը դարձնէր և կարծես թէ խորին ուշադրութեամբ մտիկ կ'ընէր, մերթ՝ իր ձեռքն օրելով՝ ուշիկ եղանակին չափ կ'նշանակէր։ Իր սիրած մէկ քանի զեղեղեղանայ ժամանակ՝ ասպետին ձայնակից եղաւ, մինչդեռ ասոր ձայնը սկսաւ լինելուն չէր կարող Ճղնաւորին նուրբ Ճաշակին սպասանջային չափ եղանակը բարձրաձայն երգել։ Երբ երգը լմնցուց, Ճղնաւորը յայտնեց աղգու խօսքերով որ շատ լաւ էր և զեղեցիկ երգեց։

— Եւ սակայն — յարեց նա — կարծեմ թէ իմ սաքսօն հայրենակիցս նօրմաններու հետ ընդ երկար կենակցելուն՝ անոնց մելամաղձոտ եղանակները սորվեր է։ Ո՞վ կ'բռնադատէր այն բարեկիր ասպետն իր բնիկ երկրէն հեռանալու, և հեռանալովն ի՞նչ կրնար յուսալ, բայց եթէ 'ի դարձին տեսնել որ իր սիրուհին ուրիշի մը հետ կապուեր է, և իր գիշերային նուագը մտիկ չըներ՝ որպէս թէ կատուն խողովակին մէջ մնաւէր։ Բայց դարձեալ, քաջ ասպետ, այս բաժակը քու կենաց և ամէն Ճշմարիտ սիրահարներու յաջողութեան համար սիտի խմեմ։ Վախնամ որ դու ասոնց կարգէն չես — յարեց նա՝ դիտելով որ ասպետն (որուն գլուխը՝ ստէպ պարպած բաժակներէն՝ սկսեր էր տաքնալ) կոյժէն իր գլխիկն մէջ ջուր կ'գներ։

— Դ՞ինչ — հարցուց անսպետը — միթէ չբսիր լոռ որ այն ջուրը քանի պատկառելի պաշտպան սուրբ Տընսդանի աղբիւրէն կ'բղխի։

— Անշուշտ — պատասխանեց Ճկնաւորն — և անոր մէջ հարիւրաւոր հեթանոսներ մկրտեց։ Բայց երբէք լսած չեմ որ այն ջրէն խմած լինի։ Աշխարհիս մէջ պէտք է ամէն բան իր յատուկ նպատակին համեմատ գործածել։ Սուրբ Տընսդան՝ ուրիշին չափ քաջ գիտեր զուարթ վանականի մը արտօնութիւնները։

Այս ըսելով՝ իր ձեռքը տաւիղին երկնցուց և իր հիւրը զուարճացուց հետևեալ նշանակալի երգով՝ որ սեռակ մը derry-down* եղանակի մը վրայ յօրինուած և անկլիական հին երգի մը մէջ յիշուած է։

ԲՈԿՈՏՆ ԿՐՕՆԱՒՈՐ

1

Տամ պիտի քեզ, ընկեր, երկու երեք տարի
Պիզանսէն Սպանիա, յԵրուսալէմ այցի։
Բայց թէ յոգնիս դադրիս, ոչ մի մարդ բաղդաւոր
Տի չգտնես ուրեք՝ քան զբոկոտն կրօնաւոր։

2

Ասպետ վազէ 'ի մարտ իր տիրուհւոյն համար՝
Եւ իրկուն դառնայ տուն՝ թշուառ նիզակահար։
Իսկոյն հաղորդ կու տամ, զի կին իւր մնաւոր
Ձգանկայ այլ սիրեցնիք՝ քան զբոկոտն կրօնաւոր։

3

Թմպաւոր, վանք, գիտնիք, շատ իշխաններ արդէն։
Հաներ են պատմուածն՝ շուրջառի փոխարէն։
Բայց մեղնէ որ երբէք՝ յայտներ է սին խղճ որ
Սպիտակ խոյրի տեղ թաղ առնու՝ մի կրօնաւոր։

4

Դուրս ելաւ կրօնաւոր և ամէն ուր որ գնաց։
Հոգն ու իր սրտին ամէն տեղ գտաւ բաց։

*Դրոլլը։ Պէտք է գիտնայ ընթերցողն որ դրոլլոյն հանդերգը շատ հին կը սեպուի, և ոչ միայն Եօթնապետութեան այլ Տրուխաներու ժամանակին կ'հասնի, և կ'ըսեն թէ այս հանդերգն այն պատկառելի մարդիկ կ'գործածէին երբ նուիրական ասաք հաւաքելու կ'երթային։

Ուզած տեղ մեն կը գայ, երբ յոգնի դադարի ;
Զի ամէն մարդու տուն՝ է մեր կրօնաւորի ։

5

Կէսօրին կ'սպասուի և դեղջուկն չժտի
Մինչ գալը ուտել հայ կամ ասլուր սալորի ։
Զի լաւագոյն ուտեստ և կրակին մօտ ամռան
Ունի իւր սեպհական բոկոսն կրօնաւոր ։

6

Երիկուն կ'ըսպասեն՝ խմորը կ'տապկեն
Գորշ գարեջրին տակառ բանան՝ ամեն պարպեն
Տան տիկին լաւ սեպէ երկանը մնալ մառանի՝
Քան մերժել գիրգ մահիճ բոկոսն կրօնաւորի ։

7

Ընդ երկար կ'սպաշտեն սանտալ ; գդակ ; չուան
Սադանէն կ'երկնչին՝ Բաբին կը հաւատան
Զի կենաց վերջ ժողվել՝ կալով անմաս փուշին
Է մի միայն բաժին՝ բոկոսն կրօնաւորին ։

— Ճշմարիտը — գոչեց ասպետը — Ճշտիւ և հեշտօրէն երգեցիր քու ուխտդ չափէ դուրս գովելով ։ Սրբակրօն հայր, դու սադանին վրայ խօսեցար, բայց միթէ չէս վախնար որ օր մ'ուխտիդ հակառակ գրօսնլու ժամանակ քեզի այցելութեան գայ ։

— Ես ուխտիս հակառակ վարուիմ — պատասխանեց Ճգնաւորն ։ — Այդ ամբաստանութիւնդ կ'հերքեմ, արանձուր կ'կոխեմ. ես իմ քան հանդիսական պաշտօն ըստ օրինի և անկեղծօրէն կ'կատարեմ ։ օրն երկու պատարագ կ'ընեմ՝ մին առաւօտ և միւսն իրիկուն ; առաւօտեան ։ կէսօրուան և երեկոյեան ժամերգութեամբ ; նոյնպէս հաւատամք և Հայրմեր կ'ըսեմ ։

— Բայ 'ի այն գիշերներէն որ լուսին կայ երէորսի ժամանակ, 'ի քաց առնալ աբսաւոյ կարգի պարգանէր — պատասխանեց Ճգնաւորն — ինչպէս որ մեր ծերունի վանահայրն ինձ սովորեցուց ըսել՝ երբ յանդուգն աշխարհականներ եկնեն հարցնեն ինձ եթէ իմ ուխտիս բոլոր մանր պարտաւորութիւնները կ'կատարեմ ։

— Իրաւ է, հայր սուրբ — պատասխանեց ասպետը — բայց ամ-

ոսանան այսպիսի մռայլումներ դիտելու սրամտիր է. ամէն տեղ կ'երթայ, ինչպէս որ դիտես մտնող աւլուծի պէս։

— Եթէ կ'յանդգնի թող այս տեղ մտնէ — ըսաւ կրօնաւորն — և իմ պարանիս մէկ ծայրը բաւական է զանի աւելի բարձր մտնելէ տալ քան սուրբ Տրնդանի ոտնելիներն. ես երբէք մարդէ չեմ վախցած և նոյնչափ անվախ եմ սատանայէն և իր կորիւններուն առջև։ Սուրբ Տրնդան, սուրբ Տիպրիք, սուրբ Վայնպալտ, սուրբ Վայնֆրէտ, սուրբ Սվիսերտ, սուրբ Վիլիք, առանց մռնալու և սուրբ Թովմասն երբ իմ օգնականներս են, իմ անձնական արժանիքիս ուժով բոլոր այն սատանաներուն դիմադրաւ կ'կենամ, թող դան իրենց կարճ ու երկար պոչերով, բայց իբրև դաղտնիք ահա կ'ըսեմ քեզ, որ երբէք չեմ խօսիր այս տեսակ բաներու վրայ, բարեկամ, բայց միայն առաւօտեան աղօթքս ընելէն ետև։

Հետևապէս խօսակցութիւնը փոխեց. Ճգնաւորին և ասպետին խնդութիւնը մինչև խենդութեան հասաւ, և հետզհետէ շատ մ'երդեր երգեցին, երբ յանկարծ եկան դրան քանի մ'ուժգին հարուածներ տուին և իրենց խրախճանն ընդմիջեցին։

Այս ընդմիջման պատճառը բացատրելու համար հարկ է ուրիշ խմբի մ'արկածները պատմել. վասն զի, վաղեմի Արիոսդին նման՝ չեմ կամիր մեր վէպին անձերէն միոյն վրայ շարունակ խօսիլ։

ԳԼՈՒԽ ԺԸ

Օ՜ն անդր, մեր լաւիղ՝ կայ ընդ ձոր, ընդ փապար,
Ո՛ւր սա իր երիշտ մոր գթէ այծեամ կայտառ,
Ո՛ւր և ստուար կաղնին՝ ոստերով բազմաճղի,
Արիւղին ճառագայթներ կ'արդելու ընդ ուղի։
Օ՜ն ընդ առաջ, ասանք են ճանապարհ սիրուն
Ի ձեռել՝ երբ զուարթուն արև կայ 'ի գահուն։
Ընախորժ, անսայդ է Կենթիոյ լանջար
Երբ իր աղօտ լուսով լուսե զահեղ անտառ։

ԷՏՐԻԿ ՖՕՐԼՍԹ

Երբ սաքսոն Սէարիկ՝ իր որդւոյն նուազիլը տեսաւ Էշլիի մրցարանին մէջ՝ իր առաջին շարժումն եղաւ հրաման տալ որպէս զի իր սպասաւորներն առնուն զանի խնամեն, բայց իր խօսքը բերնին մէջ մնաց. անկարող եղաւ, այն բաղմութեան առջև՝ իր մերժած և ժառանգութեա-

նէ զրկած որդին Ճանչել։ Սակայն Օսվալտի ապսպրեց որ զանի աչքէն չհեռացնէ, և մէկ քանի ստրուկներու հետ Իվանոէն տունը տանի՝ երբոր ամբոխն սկսի ցրուիլ։ Բայց Օսվալտի տրուած յանձնարարութիւնն՝ ուրիշներն արդէն կատարեր էին. ամբոխը ցրուեցաւ, արդարև, այլ ասպետն աներևոյթ եղեր էր։

Սէտրիկի մատուռին ընդունայն չորս կողմը փնտռեց իր նորատի տէրը գտնելու համար. տեսաւ այն արիւնալի վայրն ուր քիչ մ՚առաջ Իվանոէ ընկեր էր, բայց ինքն անհետ եղեր էր։ Կարծես թէ պարիկներն առեր տարեր էին զինքը։ Կարելի է Օսվալտ (վասն զի սաքսոնները աւելորդապաշտ են) Իվանոէի կորուստը բացատրելու համար այսպիսի կարծիք մը տածէր, եթէ յանկարծ ձիապանի պէս հագուած անձ մ՚աչքին զարնելով՝ իր Կիւրթ ընկերին կերպարանը չճանչեր։ Իր տիրոջը վիճակին վրայ անհանգիստ և անոր յանկարծական կորուստին վրայ յուսահատ՝ ծպտեալ խոզապանը ամէն տեղ զանի կ՚փնտռէր, և այս խուզարկութեան ժամանակ մնացեր էր իսկ թէ իր պարտքն է Կիւրթը ձերբակալ ընել՝ իբրև փախստական Մ՚օրուն վճիռն իր տէրը պիտի տար։

Մատուռին իր հարցումները կրկնելով՝ Իվանոէի անհետանալու մասին՝ այլեւոի ոչ մի իմացաւ հանդիսականներէն որ ասպետը խնամով վերուցեր են լաւ հագուած սպասաւորներ՝ և հանդիսին ներկայ գտնուող տիկնոջ մը գահաւորակը դրեր՝ և անմիջապէս մոցարանէն հաներ են։ Այս տեղեկութիւնն առնելով՝ Օսվալտ միտքը դրաւ իր տիրոջ մօտ դառնալ ուրիշ հրահանգներ ստանալու համար, իր հետը տանելով Կիւրթը, զոր կերպով մ՚իբրև դասալիք կ՚նկատէր և Սէտրիկին տունէն փախչող սպասաւոր մը։

Իսկ Սէտրիկ՝ իր որդւոյն վիճակին վրայ սրտամաշ և կսկծալի վախեր ունէր. վասն զի ինքնութիւնն իր ազդեցութիւնը կ՚ներգործէր, թէև Սէտրիկ ստոյգիկեան հայրենասիրութեամբ անոր կ՚անսասանէր։ Բայց այն ինչ իմացաւ որ Իվանոէ խնամատար, և թերևս բարեսէր բարեկամներու ձեռքը կ՚դանուի, որ իր որդւոյն վիճակին տրթիւ զգացած հայրական մտատանջութիւնը նորէն դառնութեան և բարկութեան զգացման տեղի տուաւ, զգացումմ՚որ, ինչպէս կ՚ըսէր, Վիլֆրիտի որդիական անհնազանդութենէ վիրաւորեալ կ՚սեպէր։

— Թող իր ընտրած Ճանրան շարունակէ նա — կ՚ըսէր — թող անոնք որոյ համար ստացաւ իր վէրքը բուժեն զինքն։ Աւելի յաջողակ է նօրման ձեռնածուի մը խաղերը խաղալ՝ քան թէ իր անկլիացի նախ-

հեռաց համբաւն ու պատիւը պաշտպանել թրով և տապարով, որոնք իր քնիկ երկրին ընտիր և հին զէնքն են։

— Եթէ իր նախնեաց պատիւը պահպանելու համար — ասաւ Ռովէնա՝ որ ներկայ էր — բաւական է խորհրդի մէջ իմաստուն և գործադրութեան մէջ քաջ լինիլ, եթէ բաւական է արեւոց մէջ քաջարի և ընտրելոց մէջ քաջընտիր լինիլ, իր հօրը ձայնէն զատ ձայն մը չկայ որ անոր զլանայ . . . ։

— Դու լռութիւն պահէ, օրիորդ Ռովէնա, այդ կիսին վրայ քու խօսքդ մտիկ չեմ ըներ — ասաւ Սէտրիկ։ — Իշխանին կոչունքին համար պատրաստուէ. անտվոր քաղաքավարութեամբ և պատուաւոր պարագաներու մէջ հասաւ մեզի այս հրաւէրը, քաղաքավարութիւն մը՝ զոր՝ Հէստինկսի ազէտաբեր օրէն վեր՝ հազիւ ուրեմն ցոյց տուած են մեզ դուռդ Նօրմանները։ Այս ինչոյքին երթալ կ'ուզեմ, զէթ այն հպարտ Նօրմաններուն յայտնելու համար թէ հրչափ անկարեկիր է քաքսօն սիրտ մ'որդւոյ մ'որ իրենց արիագոյն ասպետներն ընկեր էր։

— Իսկ ես — ասաւ Ռովէնա — անդ ՉՊԻՏԻ երթամ. զդոյշ եղիր, հաւատա ինձ, որ քու արիութիւն և հաստատամտութիւն կարծածդ, բրտի խստութիւն չհամարուի։

— Ուրեմն տունը մնայիր, ապաշնորհ օրիորդ — պատասխանեց Սէտրիկ — քու սիրտդ է միայն խիստ, քանի որ Ճնշեալ ժողովրդեան մը բարօրութիւնն ասյօրինի սիրոյ մը կ'զոհես։ Երթամ՝ պիտի ամենիւ Աթէլստէյնն առնլու և անոր հետ ճօհն տ'Անժուի խնջոյքը դնալու։

Հէտևապէս Սէտրիկ դնաց այն խնջոյքն, որուն կարևոր պարագաներն արդէն յիշեցինք։ Դղեկէն ելնելով՝ սաքսօն հողատէրներ ձի հեծան, նոյնպէս իրենց սպասաւորներն, և այս չուրն ժամանակ պատահած խառնակութեան մէջ՝ Սէտրիկ՝ առաջին անգամ դասալիք Կիւրթին վրայ աչք նետեց։ Ամենիւ սաքսօնն, ինչպէս որ արդէն տեսանք, մեծ սրտնեղութեամբ ելեր էր, և պատրուակ մը կ'փնտուէր իր բարկութիւնը մէկուն գլխին թափելու համար։ — Շղթանե՛ր, շղթանե՛ր քերեք — ասաւ։ — Օսվալտ, Հիւնտիսկէրդ, շեր, ստրուկներ, ինչո՞ւ համար այս ապիրատն ազատ թողեր էք։

Կիւրթի ընկերներն՝ առանց որ և է ընդդիմութեան՝ զինքը պախուրցով մը կապեցին իբրև պատրաստադոյն կապով մը։ Այս դործողութեան անմուն՝ դլուխ ծռեց Կիւրթ, միայն՝ իր տիրոջ յանդիմանական ակնարկ մը նետելով՝ ասաւ. — Այս պատիժը կ'կրեմ, վասն զի քու վարձինդ ու արիւնդ ուզելի սիրելի քան թէ իմս։

— Զի հեծիր, և շուտ ճանբայ ելիր — ըսաւ Սէտրիկ։

— Իրաւի, արտորալու հարկ կայ — ըսաւ ազնիւ Ալթէլստէն — վասն զի թէ որ չփութանք՝ արժանի Վալտօֆ արբային պատրաստուելիւններն երկրորդ ընթրիքին համար, բոլորովին 'ի զուր պիտի երթան։

Սակայն ուղևորներն այնքան արտորացին որ սուրբ Վիթօլտի մենաստանը հասան ակնարկեալ աղէաը պատահելէն առաջ։ Նոյն իսկ աբբան՝ որ հին սաքսօն ցեղէ մը կ'սերէր, իր ազգին յատուկ առատաձեռն հիւրասիրութեամբ ընդունեց ազնիւ հայրենակիցներն, և երկայն ժամանակ մեծարեց, կամ՝ լաւ ևս ըսեմ, մինչև առաւօտեան դէմ, իսկ հետևեալ օրն՝ իրենց կրօնաւորէն չբաժնուեցան՝ փառաւոր նախաճաշիկ մ'ընելէն առաջ։

Ձիաւորները մենաստանին բակէն ելնելու ատեն՝ դիպուած մը պատահեցաւ որ փոքր ինչ վրդովեց սաքսօններն, որ՝ քան ամէն ժողովուրդ Եւրոպիոյ՝ աւելորդապաշտ էին, և դուշակներու կ'հաւատային, այնպէս որ մինչև այսօր մեր ժողովրդային աւանդութեանց մէջ այս մասին եղած կարծեաց մեծ մասը կրնանք անոնց վերաբերել։ Վասն զի նորմանները խառն ժողովուրդ մը լինելով, և այն ժամանակի ուսմանց աւելի հմուտ՝ մուցեր էին իրենց նախնեաց Աքսանինավիայէն բերած շատ մ'աւելորդապաշտութիւններն, և կ'պովուէին թէ այս մասին աղատօրէն կ'մնածեն։

Այս պարագայիս մէջ՝ վերահաս դժբաղդութեան մ'երկիւղ ազդող յարգելի դուշակն եղաւ մեծկակ, նիհար, սև շուն մը, որ շիտակ նստած՝ ողբալին ոռնաց այն միջոցին որ առաջին ձիաւորները մենաստանին մեծ դռնէն դուրս ելան, և ապա վայրագ կերպով հաջեց ասդիս անդին ոստոստելով, և կարծես թէ ձիաւորներու խումբէն զատուիլ չէր ուզեր։

— Այս երաժշտութիւնը չեմ սիրեր, հայր Սէտրիկ — ըսաւ Ալթէլստէն, վասն զի այս յարգելին անուամբ անոր հետ խօսելու սովոր էր։

— Նոյնպէս ևս, եղբայր — ըսաւ Վամբա — վասն զի շատ կը վախնամ որ այս երաժիշտը մեզի սուղի պիտի նստի։

— Ըստ իս — ըսաւ Ալթէլստէն՝ որուն յիշողութեան վրայ արբային լաւ դարեջուրն (որովհետև Պրդօն արդէն երևելի էր այս ընտիր ըմպելիին կողմէն) նպաստաւոր տպաւորութիւն մ'ըրեր էր — կարծեմ՝ աւելի աղէկ կ'ընենք եթէ ետ դառնանք և վանահօր հետ մինչև կէսօր անցնինք։ Ուղևորութիւն մ'երբեք յաջող չլինիր՝ երբ ուղևորին ճանա-

բուն վրայէն, ճաղար կամ հաջող շուն մ'անցնի, մինչև որ ուրիշ ճաշ մը չընէ։

— Օ՛ն առաջ — ըսաւ Սէտրիկ անհամբեր — արդէն մեր ուղևորութեան համար օրը շատ կարճ է։ Իսկ այս կենդանին կ'ճանչեմ, փաստական Կիւթ ստրուկին շունն է, իր տիրոջ պէս անօգուտ դասալիք մը։

Այս ըսելով Սէտրիկ՝ երասանններուն վրայ ելաւ, և ուղևորութեանը խոչընդոտ եղող շան վրայ զայրանալով՝ Գանկսին նետեց իր նետը, վասն զի իրօք Գանկս շունն էր այն, որ իր տիրոջ ասասանդական շաւղին հետևելով՝ զայն կորուսեր էր, և այժմ իր անախորժ կերպով կ'ուրախանար Կիւրթը գտնելուն։ Նետը շան ուսը զարկաւ և քիչ մնաց զայն գետինը պիտի դամէր. և Գանկս զայրագին Սէտրիկին երեսէն խոյս տուաւ ոռնալով։ Կիւրթին սիրտն ելաւ, վասն զի իր հաւատարիմ ընկերին դէմ այս սպանութեան փորձն աւելի տաժանելի դատաքան թէ իր ընդունած դատն պատիժը։ Իր ձեռքն ընդունայն աչալը տանելու աշխատելէն ետև՝ ըսաւ Վամպային, որ իր տիրոջ զայրոյթը դիտելով՝ խոհեմութեամբ ետևի կողմը քաշուեր էր։ — Կ'աղաչեմ քեզ, շնորհ ըրէ ուշերս սրբել վերարկուիս քղանցքով, փոշին կ'նեղէ զիս, և այս կապերս չեն թողուր որ ես ինքնին սրբեմ։

Վամպա խնդիրը կատարեց, բաւական ատեն քովէ քով արշաւեցին և նոյն պահուն Կիւրթ տխրալին լռութիւն մը կ'պահէր։ Ի վերջէ իր զգայումներն աւելի զսպել չկարենալով, ըսաւ.

— Վամպա բարեկամ, Սէտրիկի ծառայող չիմարներէն դու միայն քու չիմարութիւնդ ընդունելի ընելու ճարպիկութիւնն ունիս։ Ուստի, դնա անոր մօտ և ըսէ թէ ոչ սերն ու ոչ երկիւղը կարող են ստիպել զիս անոր ծառայել այսուհետև։ Իմ դլուխս կրնայ կտրել, կրնայ զիս դանակոծ ընել, կրնայ զիս շղթայակապ բանտարկել, բայց այսուհետև կարող չէ բռնադատել որ զինքը սիրեմ կամ իրեն հնազանդիմ։ Ուստի, դնա, իմ կողմէս ըսէ որ Կիւրթ Պիվուլչի որդին իր պաշտօնէն կ'հրաժարի։

— Իրաւի — ըսաւ Վամպա — որչափ որչիմար եմ, այդ չիմարական պատդամաւորութիւնը չպիտի կատարեմ։ Սէտրիկ ուրիշ նետ մի ալ ունի գօտիէն անցած, և գիտես արդէն որ քաջ հշան կ'առնու։

— Փոյթս չէ — պատասխանեց Կիւրթ — եթէ ինձի նշան առնու։ Երթէ՝ իմ նորատի տէրս, Վիլֆրիան՝ արիւնլուայ թողուց անինամ, այսօր փորձ փորձեց սպաննելու իմ աչքիս առջև՝ այն կենդանին որմէ

գլուխ մէկը սիրած չէ գլխս։ Ս. Էտմոնտ, Ս. Տընսդան, Ս. Վիմօլտ և Ս. Էտվարտ Խոստովանող, և սաքսն օրացոյցին բոլոր սուրբերը վկայ (վասն զի Սէտրիկ սաքսն չեղող սուրբի վրայ երդում չէր ըներ, և բոլոր անեցիք ալնոյն Ջերմեռանդութիւնն ունէին) որ երբէք անոր չպիտի ներեմ։

— Ես այսպէս կարծեմ — ըսաւ միմոն, որ ստէպ տան մէջ հաշտարար պաշտօն կ'վարէր — թէ մեր տանտէրը Գրանկոր վիրաւորելու միտք չունէր, այլ միայն վախցնելու։ Վասն զի դու ալ դիտեցիր անշուշտ որ երասանին վրայ ելաւ, որպէս թէ նետը շան վրայէն նետել կ'ուզէր, և իրօք նետն առանց դպելու պիտի անցնէր, բայց Գրանկոր յանկարծ ոստում մ'ընելուն նոյն միջոցին, թեթև վէրք մ'առաւ. այս վէրքը բուժելու ես վրաս կ'առնում մէկ բէնիի կուպրով։

— Եթէ ըսածդ հաւատալի լինէր — ըսաւ Կիւրթ — եթէ իրօք կարենայի հաւատալ ըսածիդ. բայց ոչ, ես դիտեցի որ լաւ նշան առաւ, ըսեցի թէ ինչպէս կ'սուլէր նետն օդին մէջ նետողին զայրալիր չարակամութեամբն։ Եւ երբ գնաց նետը դետին մտուեցաւ՝ դողդողաց և կարծես թէ նշանը վրիպելուն կ'ցաւէր։ Սուրբ Անտոնինոսի սիրական շան վրայ կ'երդնում, որ Սէտրիկի ծառայութենէն կ'հրաժարիմ։

Եւ սրտմտած խողաբածը նորէն լռութիւն պահեց և միմոն 'ի զուր ջանաց անոր սրտմտութիւնը փարատելու։

Նոյն պահուն՝ Սէտրիկ և Ամէլստէն՝ խմբին պարագլուխներն՝ երկրին վիճակին, արքայական դերդաստանին երկպառակութեանց, նորման իշխանաներուն վէճերուն և կռիւներուն վրայ կ'խօսէին առանձին, և կ'յուսային որ ճնշեալ սաքսոնները նորմաններու լուծը թօթուեն, կամ դէթ՝ ըստ երևոյթին ծպտելիք քաղաքային պատերազմներէն օգուտ քաղելով՝ ազգային կարևորութիւն և անկախութիւն ձեռք ձգեն։ Այս խնդրոյն վրայ Սէտրիկ շատ բորբոքած կ'երևէր։ Իր ազգին անկախութեան վերահաստատութիւնը որսին միակ փափաքն էր, փափաք մ'որուն կամովին զոհեր էր իր տունին երջանկութիւնն և իր որդւոյն շահերը։ Բայց այս մեծ յեղափոխութիւնը՝ բնիկ անկիւսյոց 'ի նպաստ՝ կատարելու համար պէտք էր որ իրենց մէջ միացած լինէին և որոշ պարագլուխ մը ներքև գործէին։ Ոչ միայն անհրաժեշտ էր սաքսն արքունի ցեղէն գլուխ մ'ընտրել, այլ նաև իրրև հանդիսաւոր պայման կ'պահանջուէր այն անձանց կողմէն որոց Սէտրիկ իր դաղտնի խորհուրդներն և յոյսերը յայտներ էր։ Դէթ Ամէլստէն այս յատկութիւնն ունէր, և թէպէտ իրր պարագլուխ կանդնելու մնային

ֆիրքէ կամ տաղանդէ զուրկ էր, բայց հաճելի կերպարան մ'ունէր։ Վատասիրտ չէր, զինուորական կրթութիւններու վարժ, և տրամադիր կ'երևէր իրմէ աւելի խոհեմ խորհրդականներու կարծեաց անսալ։ Նա մանաւանդ՝ ամէն մարդ գիտէր թէ Ալթէլստէյն առատասիրտ էր ու հիւրասէր և կարծէր թէ բարեբարոյ էր։ Սակայն որչափ որ սաքսօնեան դաշնակցութեան գլուխ սեպուելու իրաւունքներ ունէր Ալթէլստէյն; իր հայրենակիցներուն մեծ մասը տրամադիր էր օրիորդ Ռովէնային տիտղոսը նախադաս համարիլ, որ ուղղակի Ալֆրէտէն կ'ինէր և որուն հայրն իր իմաստութեան, քաջութեան և վեհանձնութեան կողմէ նշանաւոր պարագլուխ մը լինելուն, յիշատակը մեծ պատիւ ունէր հարստահարեալ հայրենակցացը մէջ։

Եթէ Սէտրիկ փափաքէր՝ իրեն համար դժուարին բան մը չէր; կէս միւսներուն չափ զօրաւոր կուսակցութեան մը գլուխն անցնիլ։ Երկու հետամուտներուն արքայական իրաւանց դիմադրելու համար Սէտրիկ արիութիւն; գործունէութիւն; ազդեցութիւն; և մանաւանդ անձնուէր եռանդ մ'ունէր այն դատին համար որով ՍԱՔՍՕՆ մականունը սատեր էր, իսկ իր ծնունդն Ալթէլստէյնի և իր սանուհիին միայն աւելի ստորին էր։ Բայց այս յատկութիւններն ետութեան ամենաթեթև արատը չունէին, և՝ փոխանակ իր տկարացած ազգը նոր կուսակցութիւն մը կազմելով աւելի ևս բաժնելու՝ իր յատակադծին էական մէկ նպատակն էր արդէն գտնուած կուսակցութիւնը ցրուել՝ Ռովէնան Ալթէլստէյնի հետ կարգելով։ Սակայն իր սանուհւոյն և որդւոյն փոխադարձ սէրն այս սիրական նպատակին արգելք մը լինելուն, ստիպուեր էր Վիլֆրիտը տունէն արտաքսելու։

Սէտրիկ այս խիստ միջոցն'ի գործ դրեր էր՝ այն յուսով որ Վիլֆրիտի տարակայութեան ժամանակ, Ռովէնա թերևս իր սէրը մոռնար, բայց այս յոյսն'ի դերև ելաւ և ատոր պատճառն ըստ մասին Ռովէնայի դաստիարակութեան կերպն էր։ Սէտրիկ, որուն համար Ալֆրէտի անունը դերագոյն էակի մը անուան չափ մեծ էր, այս նշանաւոր թագաւորին յետին շառաւիղն այնչափ յարգանօք խնամեր էր որ թերևս այն ժամանակները ճշմարիտ իշխանուհի մը հաղիւ ուրեմն տեսած պիտի լինէր։ Ամէն պարագաներու մէջ՝ Ռովէնայի կամքը տան օրէնքն եղած էր, և նոյն իսկ Սէտրիկ, որպէս թէ այն փոքրիկ շրջանին մէջ անոր վեհապետութիւնը լիովին ճանչելու որոշած լինէր, կարծեր թէ իբր առաջին հպատակներէն մին անոր հնազանդելու իրեն պարտականք կ'համարէր։

ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ

ԶԱՐՄԱՅՐ ԵՒ ՊԱՆԹԱԶԷԼԷ*

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԹՈՒԱԾ

Գ.

Մեր ազգային եղանակը՝ ասայ Զարմայր ժպտանօք,
Աւել քաղցր է՝ երբ կը երգեն բանդռանահարք նուագօք.
Իմ զօրայ մէջ կան վիպասանք, քնարերգակք, ցցասայք,
Թէ կամենաք թող դան նորա, երգեն ձայնեն մեր քերթածք։
Չէ, չէ՝ ասայ Անդրոմաքա, մենք չուզենք այլ երգաբան,
Մեզ ցանկալի է քո ձայնով պատուել մեր այս խրախճան.
Երբ Հայերուդ մարտից մէջը քաջալերես բարբառով,
Արձագանքը սար ու ձորը կը տարածուին պնդալով։
Հեկտոր կրկնեց. Ա.քիլլէսի՝ ձայնն է Յունաց մէջ զոված.
Իրաւ՝ ահեղ է նորա ձայն և քաղցր փողոց մէջ հնչած.
Ես նորա ձայնն շատ եմ լըսել, բայց քո ձայնը՝ քաջ Զարմայր,
Միայն հեռուստ եմ միշտ լըսել, որքան մարտէն քաղաք դայր։
Անդրոմաքա միջակրատուր արաւ խօսք իւր զուգակցի,
Ասայ՝ մեր բարձր աշտարակէն՝ պարզ կը լըսուի ձայն քաջի.
Քանի անգամ որ հասել է պատերազմ մօտ պարըսպայ,
Ես միայնակ կամ ընկերօք միշտ եղել եմ անդ նստած։
Այնքան ըստէպ եմ ես լըսել քաջ Զարմայրի խօսքերը,
Որ մէկ քանին սովորել եմ «Ո՞ւր են արդեօք՝ Հայերը.
«Այ քաջարի Հայկայ որդիք, քաջ զաւակունք Արամայ,
«Մի՛ վախենաք, առաջ երթանք, կանգնինք հանդէպ Ա.քիլլեայ։»
Այս խօսքերէն ես մի միայն Ա.քիլլեան կը հասկանամ,
Միւսները՝ թէ ինչքեր են՝ ըմբռնելն ոչ իմանամ.
Բայց ահաւոր կը լսուի ձայնդ՝ իբր մունչիւն առիւծի.
Զարմայր ինքն էլ մէկ առիւծ է արիւնախանձ մէջ մարտի։
Բռնեց իսկոյն խօսքի ծայրը, հրաշաշաղեղն Հեղինէ,
Ասայ. Քոյր իմ՝ ով կասէ՝ թէ սա այն ահեղ Զարմայրն է,
Որ մարտի մէջ մէկ առիւծ է, դաւնի նրման է նստած,
Սորա հրոցը արութիւնը՝ արդեօք ուր է ըսքողած։
Պանթազէլէ պատասխանեց՝ անձին մէջ է արութիւն,

*Տես թիւ 8, 11։

Ինչպէս ծոյի մէջ կը պահենք մեր զանձ և մեր ճոխութիւն.
Միթէ լրսած չես Զարմայրի մեծ մեծ գործոց գովասանք,
Տրովադայ մէջ շատ անգամ կը նուագեն երգաբանք։
Պրիամոս ուրախացաւ իւր անձին մէջ որ այն կոյս
Հեղինէի խիզախ խօսքէն համեստութեամբ տուեց խոյս,
Ասաց. Դոտրիկ՝ իմ Հեկտորս գովեց լոկ քո քաջութիւն,
Այլ ես կ'ուզեմ գովել քո և քաղցր ու պարկեշտ հեզութիւն։
Պանթազէլէ զուարճացաւ, ու ասաց մեծ թագաւոր,
Մենք ամենքս ենք երջանիկ նստած սեղան փառաւոր,
Ի՞նչ պէտք ունինք խրատոլութեան, որ չբլլինք քաղցր, հեզ,
Մեր մէջ բընաւ կռուիւ չունինք, այլ եկել ենք օգնել քեզ։
Դահ եմ ձեզմէն՝ ասաց ծերը, հառաչելով 'ի սրտէն,
Դուք թողել էք ձեր հայրենիք, հեռացել էք ձեր երկրէն,
Այս ութերորդ տարին է որ պաշարուած է քաղաքը,
Աղամեմնոն դեռ միտք չունի գարձնել մեզմէն իւր զէնքը։
Հեկտոր ասաց. չեմ կարծեր որ Յոյնք այդպէս շուտ դառնան,
Ծովը նոցա օժանդակ է, կզգիք՝ նոցա օդնական.
Քանի որ կան Իլիոնի բրդունք ի վեր բարձրացած,
Պիտի տեսնենք Հելլադացոց մեզ դէմ վառված, բարկացած։[15]
Պարիս կրկնեց. Իլիոնի բրդունք շուտ չեն խոնարհիր,
Ագայիկեանց սրտմտութեան շուտ չի բորբոք շիջանիր.
Թէ ծալ, կզգիք են ձեռնտու Եղլադացոց մեր ընդդէմ.
Մեզ համար ևս Ասիայի թագաւորք կան նոցա դէմ։
Զարմայր հարցուց ծեր արքային. ի՞նչ էր Յունաց պատասխան,
Երբ Դիոմիդ՝ Ոդիսեայ հետ եկել էին մեզ դեսպան.[16]
Ո՞չ ապաքէն դու ուղարկել էիր երկու փեսայքդ,
Ի՞նչ էր նիւթ այն դեսպանութեան և ի՞նչ յրղած պատգամքդ։
Պրիամոս պատասխանեց. այդ փեսայքս դընացին,
Բայց Հելլենքը իմ քաղցրամտք խօսքը լսել չուզեցին.
Աղամեմնոն ասել էր՝ թէ դեսպանք կու տան պատասխան,
Յետոյ Յուլիս, Դիոմիդէս՝ Տրովադայ ներս մնան։
Շատ խօսեցանք դեսպանաց հետ, շատ պայմաններ յանձն առինք,
Բայց ոչ մէկն ևս նոցա հաճոյ երևեցնել կարացինք.
Կը պնդէին որ Հեղինէն անշուշտ պիտի յետ երթայ,

15 Հելլադացիք, Եղլադացիք, Ագայիկեանք՝ Յոյնք, Հելլենք։
16 Ոդիսև՝ է անուն Յուլիսի արքային Իթաք կղզոյ։

Եւ Պիլոսի ասպատակի վընասը տայ Տրոյադա։[17]
Հեղինէն այս խօսքը կտրեց, ասաց դառնալ չըկամիմ.
Մենելաւոս ատելի է, միշտ առ Պարիս է սէր իմ.
Ատրիդեանք ու Տինդարիդեանք չեն բարեկամ իրերաց,[18]
Ժառանգաբար թշնամի են ի պատճառս զառաւաց։
Թեսէոսէն դուստր ունէի. ինձ դստերէս բաժնեցին.
Իմ հայրենի երկրին համար՝ Մենելային կին արին.
Թէ ես նորան այր կարծէի Պարիս ինչով ինձ կառնուր,
Ինձ բռնութեամբ չեն փախցրրել, ես եմ եղել անձնատուր։
Տան ամբ ևս վրայ անցան՝ որ ես կին եմ Պարիսի,
Ոտքիս տակն է փառք ու պատիւ և Ճոխութիւն Տրոյայի.
Ես երբ ընկնիմ Յունաց ձեռքը՝ Մենելայ պիս կըսպանէ.
Ինձ այս ամուր ամբարտակը պահէ անգոյթ մահուանէ։
Երբ Թէսէոս ինձ փախցրրեց՝ մատաղամարդ կին առաւ.[19]
Ես դիւցազնց Ճաշակն առի, և փակ աչքիս բացուեցաւ.
Նոքա միայն զիտեն սիրել, Մենելաւոս ինչ մարդ է,
Լակեդեմոն ես ոչ սիրեմ՝, կեանք ու պարծանք իմ ատա է։
Թագաւորի երէց դեռայն՝ որ Ենէաս էր անուն,[20]
Ափրոդիտեայ և Անքիսայ ծնունդ սիրոյ դիւցազուն,
Խօսակցութեան խառնրուեցաւ, լուութիւնը ընդհատեց,
Եւ իւր խօսքը դէպ Հեղինէ՝ չքնաղ դշխոյն տարածեց։
Ասաց՝ Տիկին՝ մենք պատրաստ ենք քեզ ամեն ժամ պաշտպանել.
Որ Սպարտայ կոպիտ հողը քեզ չըկարենայ տեսանել,
Բայց մեր վիճակ չէ մեր ձեռին, Ճակատագիր անողոք,
Իւր դատակնիք խուլ և համր է առ մեր աղէտ և բողոք։
Իլիոն միշտ անյաղթ կընի՝ թէ չըմատնեն իւր որդիք,
Տրովադայ անվըսանգ է մինչ Աթենայ կան անդրիք.

17 Պիլոս՝ է փոքրիկ կղզի, որոյ մէջ կայր հռչակաւոր տաճարն Ափրոդիտեայ՝ ուխտատեղի ամենայն Յունաստանի. և անդ թագաւորէր Ներատորն յամենայն թագաւորս Յունաց՝ Նեստոր։ Այս տաճարի մէջ հանդիպեցաւ Պարիս Հեղինէին, և տարաւ Տրոյա՝ հանդերձ աւարաւք։

18 Ատրիդ էր հայր Ագամեմնոնի, իսկ Տինդար՝ եղբայր Ատրիդայ՝ էր հայր երկաւորաց Կաստորի և Պոլլուքսայ և դշխոյից Կլիւտեմնեստրեայ և հրաշագեղ Հեղինէի։ Զկնի բազմաժամանակեայ կռուոց՝ թագաւորքը Յունաց հաշտեցուցին զԱտրիդեան և Տինդարիդեան. այսպէս, զի Ագամեմնոն էառ զԿլիւտեմնեստրա և թագաւորեաց 'ի Միկենս, իսկ Մենելաւոս էառ զՀեղինէ և նստաւ ի Սպարտա։ Կլիւտեմնեստրա զկնի չուոյ դստերն իւրոյ ի Փիգենեայ հարաւ ի սէր մեղ ի հօրեղբօր որդւոյ։

19 Թէսէոս էր մի ի դիւցազանց ուղեկից Արգոնաւորդաց ի Կողխիս, արդի Եգեոնի արքսպի։

20 Բանաստեղծք ասէլէն՝ թէ Ենէասայ հայրն էր դիւցազն Անքիս, իսկ մայրն դիւցուհին Ափրոդիտէ։

Պալլադիոն դըրաւական է մեր անյաղթ զօրութեան,[21]
Ցոյնք չեն յաղթեր քանի որ կայ յիւրում կայի այն արձան։
Խորոյ սրտին հառաչելով Պրիամոս խօսեցաւ.
Նորա ձայնը Դարիրայի խօսածի պէս լսուեցաւ.
Ասաց. չունիք մեծն Իլիոն իւր որդւոց մէջ դաւաճանք,
Եւ տաճար մէջ ասպահով են մեր անդրիք և արձանք։
Բայց այս պիտի անշուշտ տեւէ այսուհետև երբ եք ամ,
Անյեղաբար դայ ի կատար անդառնալի դից պատգամ.
Կը կործանուին Ցունաց առջև անպարտելի ախոյեանք,
Եւ մտերիմ աւադարարք կը դառնան ինձ դաւաճանք։
Երբ Աքիլլեանն վահան ձեռին կանգնի դէմն պիշերով,
Եւ ըսկրսի հողիս կորզել պղծավատիկ սուսերով,[22]
Երբ քաղաքը լուսաւորուի հրձըգութեամբ թշնամեաց,
Եւ իմ դստերք դերի ընկնին ի ձեռս անպուտ ատելեաց.
Այս դաւաճան կընի ուսով Պալլադիոն պուրս տարած,
Ով որ հնկան կը կորցընէ հրդեհի մէջ մոլորած,
Եւ նոյն ուսով զաւամ հօրը բոցի մէջէն կը հանէ
Միակ որդւոյ ձեռքէն բռնած աւերակէն կելանէ։
Այն դաւաճան այս սեղանն է այժմ նստած միամիտ,
Ցոյսեր ունի յաղթանակաց, ոչ երկբայ է, ոչ երկմիտ.
Բայց երբ բաղդի փոփոխութիւն յանկարծ հասնի մեր վերայ,
Բարեկամը կը հեռանայ, որդին դահիճ կը դառնայ։[23]
Ո՛հ Ենէաս՝ սրտէ մաքիդ իմ այսօրուան ասածքս,
Գընաց դինին դլխոյս մէջէն և չիք դարձաւ խրմածքս.
Քանի որ ես այս կը յիշեմ՝ կը դառնանան ինձ կեանք իմ,
Կասեմ ինքս ինձ՝ ով կը մընայ՝ վերջին օրքս մտերիմ։
Անթենորը կորեց խօսքը. միթէ ամենքս կը մեռնինք.
Այսքան անյաղթ քաջեր ունինք՝ չըկարծեմ թէ յաղթըվինք.
Մեզ՝ մի մտոներ վըհատութեան, լաւ է որ երդ երդել տանք.
Ո՞վ դիտէ կամք Ճակատագրի, ի՞նչ է այդ դուր քանքարտանք։

21 Պալլադիոն էր ոսկեմայլ անդրի Ամէնայ դիցուհւոյն, զոր է Սամոթրակէ կղզւոյն երեր Դարդանոս, և յորժամ չընեցաւ Իլիոն՝ եդաւ անդ։

22 Պիւռոս որդին Աքիլլեայ այպէս դիշերով հասաւ Պրիամանին որ ապաստանելէր ի տաճարն Ամէնասայ. ուստի Ենէաս և Անթենոր գողացել Պալլադիոնը՝ ծախել էին Ցունաց, և դեռ Պրիամոս չդիտէր։

23 Թէպէտ այս Ենէասայ հմմար ասաց, բայց աւելի իւր մահը կը նկարագրէ, որ բարեկամը Աքիլլէսը որ պիտի վնասանայր՝ հեռացաւ մահաւանք, նորա որդին Պիւռոսը դահիճ երևեցաւ թէ նորա և թէ Աքիլլեայ հարսնացուհին Պոլիքսենայ դշխոյին։

Ագամեմնոնի, և ի դարձի նորա յարշաւանաց ձեռամբ նորա՝ ոսպան զԱգամեմնոն յառաջագոյն իւրում։

Դ

Պատրաստ կային փանդուռնահարք և զողթնայի հաղներդուք.
Տըրոյայի նուագածուք և փռիւգեան տաղերդուք.
Հնչեց քաղցրիկ նուագարան, սըրինդ, ջութակ, հինդաղի,
Բայց չդիտեն թէ ո՞ր երգ է բաղմականին հաճելի։
Հեղինէի մտքի մէջ կայր այն տեղ կանգնել յաղթանակ.
Իւր տալերուն կը կամենար նովաւ լինիլ օժանդակ.
Ոստայնի մէջ մէկ հնարքով բռնել գրձել Զարմայրին.
Որ նորա և Պանթազէլեայ մէջ սիրոյ թելը պարպատուին։
Խորամանկէր այս բաղմատրոյձ չքնաղատիպ պառաւը.
Զէր զովանար նորա սիրոյ անհունատենչ ծարաւը.
Կը կամենար որ Զարմայրը նորա տեսլեամբ զմայլի.
Իւր թովչարար գեղեցկութեան հետ խառնեց այլ հնար մի։
Շատ անգամ էր ականջ դրրել Մահ Պարեսի քերթածին.
Որ Հայ լեզուէն Տրոյայիք իրանց լեզու փոխեցին.
Գիտէր և այն որ Պարէսը նախահայր էր Զարմայրի,
Ուզեց երդով նրան յայտնել պէսպէս խորհուրդ երկայրի։
Առաջարկեց նուագերդուայ Մահ Պարեսի նուագել.[24]
Շուտ հասկացաւ քաջ Հեկտոր թէ ինչ կը կամի նա սարքել.
Ասաց մեղմիկ՝ լաւ հընարք է՝ շատին խրատ կը լինի,
Պանթազէլէ լեզուն խածած նորա երես կը նայի։
Բայց Կասսանդրա չըդիմացաւ, բարձրացոյց իւր աղաղակ,
Ասաց. չուզեմ՝ որ այդ երգէն, դա իմ վէպքն է բովանդակ.
Երբ այդ երգը ես կը լսեմ, սըրտիս մէջէն ինձ կասեն.
Ահա այսպէս պիտի լինի քո վիճակն համօրէն։
Դու Հեղինէ՝ զգուշացի՛ր՝ այդ չարաբաստ քերթածից.
Այդ տեղ համրիկ օրինակ է Կլիտեմնեստրեայ կամօք դից.
Ինչպէս Պարէտ խողխողուեցաւ իւր ամուսնոյ ի ծոցը,
Ագամեմնոն ևս նոյն մահ կ'առնու քո քեռ 'ի գրրկի։
Բայց ինձ և քեզ վիճակած է լինիլ նոցա մահակից,
Քեզ իւր ձեռամբ կը խողխողէ Մենելաւոս զուգակից.
Ինձ կը դերէ Ագամեմնոն, կերթամ Արգոս նորա տուն,
Այն տեղ նորա մահը տեսած պիտի ինձեմ վերջին քուն։
Զարմայրի դէմ այդ մի երգէ՛ք, նորա ցաւ կը նորոգուին,

24 Պարեսի էր նահապետ Հայոց, որ վեսայացեալ դստերն Անուշաւանայ պա-
յաղատեաց, բայց յետ բաղում ամաց սպանեալ դաւադրութեամբ կնոջն։

Եթէն տարի է նա պանդուխտ, կը չարչարուի մէջ մարտին։
Լաւ չէ որ այժմ Անուշաւան երգէն մեր քաղցր տաղասայք,
Ո՞չ ասպաքէն մեր լեզուաւ էս միշտ կը երգուին այն քերթած.ք։
Հեկտոր տեսաւ որ Կասսանդրա թոյլ ոչոսի չտայ այն երգել,
Ինչ Հեղինէ յառաջագոյն էր երգեցուցայ առարկել.
Ասայ. Զարմայր՝ որն կ'կամիս՝ որ քեզ համար երգըւի,
Կասսանդրայի գուշակութիւն՝ յուսամ որ ոչ կատարուի։
Մինչդեռ Զարմայր կը մրտածէր մէկ այնպիսի երգ երգել,
Որ ոչ մէկին ընդդէմ չըլնի, կարնայ ողջին ցնծացնել.
Կասսանդրա իւր ձայնը կըրկին 'ի խրախճանին բարձրայուց,
Ասայ. Հեկտոր, միտքդ է ինչ որ ինձ հոգիս խօսեցրուց։
Հեկտոր տուեց խոժուռադէմ՝ իւր քըրոջը պատասխան.
Լաւ միտքըս է, բայց ի՞նչ օգուտ, կատարուեցաւ ամեն բան.
Ցօժմը էլ ես այն օրը՝ երբ Պարիսը գուրս գընայ,
Քրսաներկու նաւ յետն աւած արշաւելով դէմ Ցունայ։
Դու ասացեր՝ թէ թող չերթայ, ես էս քեզ պէս խօսեցայ,
Բայց իմ և քո ձայնը ունայն անլսուր մընայ մէջ սոցա.
Պարիս բերեց Հեղինէին. դու ասացեր՝ ահա՛ ջահ,[25]
Որ ներս մնաւ Իլիոնի մէջ տարածել հուր և մահ։
Այնուհետև հուրն ու սուրը չէ պակսել բնաւ մեր մէջէն,
Եկան Ցունայ ազգ հարմնածու՝ երբ հարմնացաւ Հեղինէն,
Բորբոքուեցաւ մեր երկրի մէջ պատերազմի անշէջ հուր,
Մոլեգնաբար իւր կոտարած կանէ կատղած ահեղ սուր։
Հեղինէին ընդդէմ էին Հեկտորի այս խօսքերը,
Բայց չէր կարող դիմախօսել, մեծ ձայն ունէր Հեկտորը.
Առաւ իւր հին դիմայլակը՝ իւր թոլչարար պէրանքով,
Դէպ առ Հեկտոր ուղղեց իւր խօսք հրրապուրիչ ժպտանքով։
Ասայ. լսէ և իմ ասածս՝ հայրասպատիւ իմ մեծ տաղը.
Ես մէկ կին եմ անոք, պանդուխտ, ոչ յովաղ եմ և ոչ վաղը.
Ո՞չ այս հուրը է իմ գալով ձեր երկիրը բորբոքուել,
Ո՞չ այս սուրը ես իմ յետնէս օժիտ պրուոյդ եմ բերել։

25 Հեգկուպէ թագուհի Պրիամոսի յղի գոլով՝ յերազի կտեսնէ, որ մէկ վառած ջահ է բերել քաղաքի մէջ։ Դաբիրայէն պատգամ է լսուել, թէ այն ատրուն գաւակը որ պիտի ծնի թագուհին, պատճառ կդառնայ քաղաքի և տերուութեան կործանման։ Երբ ծնաւ Պարիս՝ նրան յանձնեցին հովուաց՝ սնուցանել Իդայ սարի մէկ այրի մէջ։ Այս տեղ տեսաւ Պարիս այն երազը, որ երեք դիցուհիք՝ Հերա, Աթենա և Աստղիկ եկել էին նորա դատաստանը. և նա ոսկի խնձորը տուել էր Աֆրոդիտէին։

Տրրովադայ դանձուց հուչակ շարժեց Յունաց նախանձը,
Եւ ընչաքաղց ագահութեան խրվեց պախուրց ու սանձը.
Յոյնք հայթայթեն այս կողմերի առուտուրը խանդարել,
Որ մարթանան միայն իւրեանք թէ գընել, թէ վաճառել։
Նոքա չէին համարձակեր ձեր դէմ առնել արշաւան,
Թէ չըընէին Թեբայեցւոց պատերազմին յաղթական.26
Հաւաքուեցան քանի իշխանք և արշաւան խրմբեցին,
Այն եօթնադուռն մեծ քաղաքը հիմնայատակ քանդեցին։
Ցանցանք Թեբայ ի՞նչ էր ապա՝ կամ ի՞նչ պատճառ մարտի կար.
Թեբասէն Յոյնք ի՞նչ վնասներ էին տեսել կամ ի՞նչ չար.
Թեբաս ծաղկել էր առևտրօք. Յոյնք նախանձով լցուեցան,
Զէնք բարձրացրին, արիւն արին և աւարօք ճոխացան։
Նոյնպէս յետոյ Արգոնաւորդք արշաւեցին դէպ կողքիս,
Ոսկիդեղման առասպելը ո՞չ յայտնի է ամենքիս.
Ոսկի արծաթ կը բերէին այն գաւառի հանքերը,
Յոյնք գընացին, կողոպտեցին բազմամրթեր դանձերը։
Այն բաղդայոյզ վայրենամիտք որոնց գիւղաղն կ'անուանեն,
Իւրեանց լաւ կամ վատ գործերը անխորհրաբար կատարեն.
Թէ մէկ դաշան կամ մէկ վիշապ են ուր ուրեք ըսպանել,
Նոցա հետ շատ անզօր մարդիկ են նոցա զոհ գընացել։
Ես իմ ծնողաց ծոցումն էի դեռ մանկական հասակի,
Ցանկարծ տեսայ զիս ընկած որս Թէսէոսի 'ի ճանկի.
Պերիթոսի հետ եկել էր ինձ մեր տանէն գողանալ,
Ես ակամայ հարկադրվեցայ այն գիւղաղնի կին դառնալ։
Ափսո՞ս՝ որ ես դառայ պատճառ երկու եղբարցս կորստեան.27
Կաստոր, Պոլլիւքս զհետ սնդեալ ի խորս ծովու ընկղուզան.
Թէ ես ևս եկած չէի՝ Յոյնք արշաւանք կ'անէին,
Երկու յաջող արշաւանքը նոցա իսպառ հարբեցրին։
Եթէ այս նուադ չյաջողի Յունաց մեղ մեծ վնաս տալ,
Նոքա նորոդ կը պատրաստուին միւս անգամ մեր դէմ գալ.

26 Թեբաս մեծ վաճառաշահ քաղաք էր Յունաց։ Եօթն թագաւորը, որոց մէջ էր և Պիլոսի արքայն Նեստորը, շատ տարի առաջ գնացին, քաղաքը պաշարեցին, առին, քանդեցին, աւարով ճոխացած ետ դարձան։

27 Հեղինէի երկու եղբարք Կաստոր և Պոլլիւքս՝ Տինդարիդեայք՝ որ Արգոնաւորդաց արշաւանի ընկեր էին, երբ խնացան որ Պարիս արքայորդին Տրոյացւոց փախցրել է Իւրեանց քրոջը՝ Հեղինէին, մտան նաւակ՝ որ երթան նորան յետառնուլ, այլ չհասան Տրոյական նաւերին, և մրրկի հանդիպելով ծովասոյզ հեղձան։

Զբպակասիր մէկ Հեղինէ՝ Եփոնէ ձեր մէջէն ։
Նոքա պիտի Տրրովադան ջնջեն իսպառ աշխարհքէն ։
Զարմայր ասաց . ուրեմն մենք զուր ենք եկել՝ Հեղինէ ,
Այս պատերազմ յաղթութիւնով վերջանալի կրուիս չէ .
Ո՛չ մեր կողմէն կը պակասին նոր նոր զօրքեր օգնական ,
Ոչ Յունացմէն կը դադարին մեր դէմ կանգնել ախոյեան ։
Իրաւացի մակաբերես՝ ասաց քաջին չքնաղը ,
Շատ հին է այս չար նախանձը , ժառանգական է ոխը .
Պելոպսի հետ է Եղլադա եկել , այն տեղ բուն դրել ,
Յոյնք կը ցանկան Փռիւգիոյ գաւառներուն ևս տիրել ։
Կ՚ասեն թէ մեղ տարապարտ են հանել այն լայն տեղերէն ,
Եւ մէկ փոքրիկ թերակղզոյ մէջ եմք պատած ծովերէն .
Կը հայթայթեն յետ ըստանալ այս բարելի երկիրը ,
Այն պատճառաւ ծով ու կղզի՝ ցրուել իւրեանց նաւերը ։
Զարմայր ասաց Հայաստանի մէջ ևս պիտի այդ լինէր ,
Մեր հայրենիք Ասքանազի ձեռին աւանդ տրուել էր .
Բայց երբ եկաւ եղբօրորդին՝ Հայկ մեր ազգի նահապետ ,
Հօրեղբայրը այն երկիրը ուրախութեամբ տուեց յետ ։[28]
Եւ Հայկ զնա իւր երկրի մէջ հանդարտ անդորը նստեցուց .
Նորան զօրաց գլուխ արաւ , իւր ազգին հետ միացուց .
Մինչև այսօր Ասքանազեան զունդ կ՚անուանուին մեր զօրքը .
Մինչև այսօր կը պահպանենք Հայկի դրած այս կարգը ։[29]
Հեկատոր ասաց՝ այդ վրնասը՝ մեր նախնիքն արել են ,
Մէկ ազգի մէջ չար նախանձու արմատ հաստատ դրել են .
Այսուհետև կամ մենք պիտի այս աշխարհէն ջնջուինք ,
Կամ Յունաց հետ հաշտուելով միանանք և խառնուինք ։

28 Հայկերդ և Արամերդ բանաստեղծութեանց մէջ կպատմուի , որ երբ Հայկ այլոց հետ միասին Մասեաց կողմէն գաղթեցաւ դէպ ի Սենաար , ինչպէս խորենացին կասէ , այն երկիրները յանձնուեցան Ասքանազին , որ էր եղբայր թորգոմայ , հօր Հայկայ , որ հասակաւ կրտսեր էր քան զՀայկ ։

29 Երբ Հայկ իւր գերդաստանաւ վերադարձաւ Բաբիլոնէն այն երկիր՝ ուր կայր գերեզմանն թորգոմայ , Ասքանազ այն երկիրները կրկին դարձոյց Հայկին ։ Հայկ՝ երբ բաժանեց հիւսիսակողմն իւր եղբարց , Ասքանազին տուեց զինուորական կառավարութիւնը , իսկ ինքն պահեց քաղաքական իշխանութիւնը . այդ պատճառաւ Հայոց զօրարանակը ասուեցաւ Ասքանազեան զունդ՝ որպէս կանխարկէ Յովհաննէս կաթողիկոսի պատմագրութիւնը . և Երեմիայի մարգարէական դրոց մէջ մէջ յիշուած է յետ ժամանակաց ։

Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

Խմբագիր–Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ